2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2012 թվականի N Մ - 884 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N 3/3.8-2/14051-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 31-ի N ՎՄ/3-6/11603-12 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01547716) 2012 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված՝ N 121110-022 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոկայանատեղի օդափոխության համակարգի մոնտաժում և դրա համար անհրաժեշտ նյութերի ու սարքավորումների մատակարարում՝ 10763513 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 885 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N Մ-548-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-784-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2012 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 483 գրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N 3/3.8-1/14033-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N ՎՄ/3-4/11552-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 31-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Եղիշե Մանուկյան» (նոր անվանումը «Վաչե և Թամար Մանուկյաններ») մատենադարանի կառուցում» ծրագրի մասին» N Մ-548-Ա (2011 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-784-Ա և 2011 թվականի նոյեմբերի 11-ի N Մ-972-Ա որոշումների խմբագրությամբ) որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «1.615.427.000 դրամ» բառերը փոխարինել «1.969.511.770 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 8-րդ կետում «31 դեկտեմբերի 2011թ.» բառերը փոխարինել «10 նոյեմբերի 2012թ.» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 31-ի N Մ-548-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-784-Ա (2011 թվականի մարտի 11-ի N Մ-147-Ա որոշման խմբագրությամբ) որոշման 2-րդ կետում «24.465.005 դրամ» բառերը փոխարինել «37.354.280 դրամ» բառերով՝ հիմք ընդունելով 2012 թվականի հոկտեմբերի 12-ի N 1 համաձայնագիրը:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 886 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N Մ-760-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2012 թվականի հոկտեմբերի 9-ի N 450 գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 23-ի N 3/3.8-1/13701-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N ՎՄ/3-4/11173-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-760-Ա (2008 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-869-Ա, 2009 թվականի հուլիսի 31-ի N Մ-521-Ա, 2011 թվականի հունվարի 21-ի N Մ-016-Ա և 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1053-Ա որոշումների խմբագրությամբ) որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «3.462.500.310 դրամ» բառերը փոխարինել «4.685.136.138 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում «3.016.095.552 դրամ» բառերը փոխարինել «4.231.886.380 դրամ» բառերով.

3) որոշման 2-րդ կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերում և որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև 31 օգոստոսի 2012 թ.» բառերը փոխարինել «մինչև 31 մայիսի 2013 թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ - 887 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԿՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՈՒԺԿԵՏԵՐԻ, ՄԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՄԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԽՈՀԱՆՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 23-ի N 3/3.8-1/13700-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N 02/6534-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հոկտեմբերիի 19-ի N ՖԲ/ԱնՄ-5/7344-12, Հայաստանի Հանրապետության կառավարու-թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N ՎՄ/3-4/11172-12 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 22-ի N 01/9327-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 6785553 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի երկու համայնքների բուժկետերի, մեկ համայնքի մանկապարտեզների սանհանգույցների և մեկ համայնքի մնանկապարտեզի խոհանոցի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հիդրո» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09804085) 2012 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված՝ N WVA/SIS ADP/SW-12/001 (RB) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 6785553 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյուն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Գրահամ Սթրոնգ

«15» Հոկտեմբերի 2012թ.

**«Սյունիքի մարզի երկու համայնքների բուժ. կետերի, մեկ համայնքի մանկապարտեզի սան-հանգույցների և մեկ համայնքի մանկապարտեզի խոհանոցի վերանորոգում»**

**Ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Աջակցել Տոլորս, Շաղատ, Աշոտավան և Շինուհայր համայնքերին, բուժ. կետերի և մանկապարտեզների սանիտարական պայմանները բարելավելու նպատակով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա, հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom, tel. +44 1908 841000 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ *(հասցե՝ Երևան, Ո.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755)*. |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրն է ՀՀ Սյունիքի մարզի Տոլորս, Շաղատ, Աշոտավան և Շինուհայր համայնքները: բնագավառը՝ սոցիալական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 6785553 դրամ:<br>Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիա:<br><br><u>Ծախսի ուղղությունը</u> — <u>չափը</u> — <u>ժամկետը</u><br>Շին վերանորոգման աշխատանքների իրականացում — 6785553 դրամ — չորրորդ եռամսյակ 2012թ. |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում Տոլորս, Շաղատ, Աշոտավան և Շինուհայր համայնքները, առավելապես՝ համայնքների երեխաները, համաձայն համայնքների կողմից ներկայացված ծրագիր առաջարկի: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 Հոկտեմբեր 2012թ. - 31 դեկտեմբեր, 2012թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սյունիքի մարզի Տոլորս, Շաղատ, Աշոտավան և Շինուհայր համայնքներում պետք է վերանորոգվի բուժ. կետերի և մանկապարտեզների խոհանոց-սան-հանգույցները (պատերի և առաստաղի հարդարում և ներկում, դռների և պատուհանների փոխում, հատակների սալիկապատում): Այդ աշխատանքները իրականացնելու համար «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթում հաղթած «ՀԻԴՐՈ» ՍՊԸ կազմակերպության հետ կնքել է պայմանագիր, որի արժեքը կազմում է 6785553 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):<br>Շինարարական աշխատանքները կսկսվեն 2012թ. Հոկտեմբերի սկզբին և կավարտվեն մինչև 2012թ. դեկտեմբերի վերջը: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Սյունիքի մարզի Տոլորս, Շաղատ, Աշոտավան և Շինուհայր համայնքներում պետք է վերանորոգվի բուժ. կետերի և մանկապարտեզների խոհանոց-սան-հանգույցները (պատերի և առաստաղի հարդարում և ներկում, դռների և պատուհանների փոխում, հատակների սալիկապատում ): Աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 6785553 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), իսկ ըստ համայնքների՝<br>Տոլորս համայնքի բուժ. կետի սան-հանգույցի վերանորոգում 704887 դրամ<br>Շաղատ համայնքի բուժ. կետի սան-հանգույցի վերանորոգում 1342732 դրամ<br>Աշոտավան համայնքի մանկապարտեզի խոհանոցի վերանորոգում 2664384 դրամ<br>Շինուհայր համայնքի մանկապարտեզի սան-հանգույցի վերանորոգում 2073550 դրամ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Սյունիքի մարզի Տոլորս, Շաղատ, Աշոտավան և Շինուհայր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Ծրագրով նախատեսված է սան-հանգույցները վերանորոգումից հետո հանձնել վերոհիշյալ չորս համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ 15 տարի այն չօտարելու պայմանով: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի գրասենյակի, Տոլորս, Շաղատ, Աշոտավան և Շինուհայր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: «Վորլդ վիժն ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Սիսիանի Տարածքային Զարգացման Ծրագրի թիմի ղեկավար

Աշոտ Բաբայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 888 -Ա
քաղ. Երևան

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 29-ի N 3/3.8-2/13980-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N ՖԲ/ԱնՄ-5/7661-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 26-ի N ՎՄ/3-6/11402-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (38 տեղ, 7541 կգ ընդհանուր քաշով, 193320 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7650 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի NN Մ-003-Ա , Մ-004-Ա, Մ-005-Ա, Մ-006-Ա, Մ-007-Ա, Մ-008-Ա, Մ-009-Ա, Մ-010-Ա, Մ-011-Ա, Մ-012-Ա, Մ-013-Ա և Մ-014-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

"Վորլդ Վիժն" ՄԲԿ կողմից C 29102 առ 22.08.2012 հայտարարագրով
ԱՄՆ-ից ստացված
ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)

14/6.10

Կոնտեյների համարն է՝ **TCNU 988716-5**: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է **200970.00 ԱՄՆ** դոլար. որից տրանսպորտային ծախսերը կազմում են **7650.00 ԱՄՆ** դոլար. քաշը՝ **7541** կգ. տեղերի քանակը՝ **38**:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը. ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 350 | Զույգ | Մարզական կոշիկ | | 9229.50 | Մ-011-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի քաղաքի և Հովունի ու Մարմաշեն գյուղերի կարիքավոր բնակչությանը |
| 60 | Զույգ | Կանացի կոշիկ | | 1812.00 | |
| 28 | Զույգ | Տղամարդու կոշիկ | | 988.40 | |
| 20 | Զույգ | Հողաթափ | | 532.20 | |
| 100 | Հատ | Շապիկ | | 2473.00 | |
| 200 | Հատ | Գլխարկ | | 1080.00 | |
| 40 | Հատ | Շարֆ | | 201.20 | |
| 120 | Հատ | Փափուկ խաղալիք | | 421.20 | |
| 2400 | Հատ | Ձեռքի օճառ | | 960.00 | |
| 40 | Հատ | Գնդակ | | 340.00 | |
| 20 | Հատ | Ծածկոց | | 85.20 | |
| 20 | Հատ | Սրբիչ | | 100.60 | |
| 54 | Հատ | Պայուսակ | | 120.96 | |
| 350 | Զույգ | Մարզական կոշիկ | | 9229.50 | Մ-014-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում |
| 60 | Զույգ | Կանացի կոշիկ | | 1812.00 | |
| 30 | Զույգ | Տղամարդու կոշիկ | | 1059.00 | |
| 20 | Զույգ | Հողաթափ | | 532.20 | |
| 100 | Հատ | Շապիկ | | 2473.00 | |
| 200 | Հատ | Գլխարկ | | 1080.00 | |
| 40 | Հատ | Շարֆ | | 201.20 | |
| 120 | Հատ | Փափուկ խաղալիք | | 421.20 | |
| 2400 | Հատ | Ձեռքի օճառ | | 960.00 | |
| 40 | Հատ | Գնդակ | | 340.00 | |
| 20 | Հատ | Ծածկոց | | 85.20 | |
| 20 | Հատ | Սրբիչ | | 100.60 | |
| 50 | Հատ | Պայուսակ | | 112.00 | |
| 350 | Զույգ | Մարզական կոշիկ | | 9229.50 | Մ-008-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում |
| 60 | Զույգ | Կանացի կոշիկ | | 1812.00 | |
| 25 | Զույգ | Տղամարդու կոշիկ | | 882.50 | |
| 100 | Հատ | Շապիկ | | 2473.00 | |
| 200 | Հատ | Գլխարկ | | 1080.00 | |
| 20 | Հատ | Շարֆ | | 100.60 | |
| 110 | Հատ | Փափուկ խաղալիք | | 386.10 | |
| 2400 | Հատ | Ձեռքի օճառ | | 960.00 | |
| 35 | Հատ | Գնդակ | | 297.50 | |
| 20 | Հատ | Սրբիչ | | 100.60 | |
| 40 | Հատ | Պայուսակ | | 89.60 | |
| 200 | Զույգ | Մարզական կոշիկ | | 5274.00 | Մ-009-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ալավերդու տարածաշրջանում |
| 30 | Զույգ | Կանացի կոշիկ | | 906.00 | |
| 15 | Զույգ | Տղամարդու կոշիկ | | 529.50 | |
| 60 | Հատ | Շապիկ | | 1483.80 | |
| 200 | Հատ | Գլխարկ | | 1080.00 | |

14/6.10

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 80 | Հատ | Փափուկ խաղալիք | | 280.80 | |
| 1600 | Հատ | Ձեռքի օճառ | | 640.00 | |
| 30 | Հատ | Գնդակ | | 255.00 | |
| 10 | Հատ | Սրբիչ | | 50.30 | |
| 350 | Զույգ | Մարզական կոշիկ | | 9229.50 | Մ-012-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Կապանի տարածաշրջանում |
| 55 | Զույգ | Կանացի կոշիկ | | 1661.00 | |
| 25 | Զույգ | Տղամարդու կոշիկ | | 882.50 | |
| 100 | Հատ | Շապիկ | | 2473.00 | |
| 200 | Հատ | Գլխարկ | | 1080.00 | |
| 20 | Հատ | Շարֆ | | 100.60 | |
| 100 | Հատ | Փափուկ խաղալիք | | 351.00 | |
| 2400 | Հատ | Ձեռքի օճառ | | 960.00 | |
| 40 | Հատ | Գնդակ | | 340.00 | |
| 20 | Հատ | Ծածկոց | | 85.20 | |
| 20 | Հատ | Սրբիչ | | 100.60 | |
| 350 | Զույգ | Մարզական կոշիկ | | 9229.50 | Մ-013-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում |
| 55 | Զույգ | Կանացի կոշիկ | | 1661.00 | |
| 25 | Զույգ | Տղամարդու կոշիկ | | 882.50 | |
| 100 | Հատ | Շապիկ | | 2473.00 | |
| 200 | Հատ | Գլխարկ | | 1080.00 | |
| 20 | Հատ | Շարֆ | | 100.60 | |
| 109 | Հատ | Փափուկ խաղալիք | | 382.59 | |
| 2400 | Հատ | Ձեռքի օճառ | | 960.00 | |
| 40 | Հատ | Գնդակ | | 340.00 | |
| 16 | Հատ | Ծածկոց | | 68.16 | |
| 20 | Հատ | Սրբիչ | | 100.60 | |
| 300 | Զույգ | Մարզական կոշիկ | | 7911.00 | Մ-006-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում |
| 58 | Զույգ | Կանացի կոշիկ | | 1751.60 | |
| 25 | Զույգ | Տղամարդու կոշիկ | | 882.50 | |
| 100 | Հատ | Շապիկ | | 2473.00 | |
| 200 | Հատ | Գլխարկ | | 1080.00 | |
| 25 | Հատ | Շարֆ | | 125.75 | |
| 100 | Հատ | Փափուկ խաղալիք | | 351.00 | |
| 2400 | Հատ | Ձեռքի օճառ | | 960.00 | |
| 35 | Հատ | Գնդակ | | 297.50 | |
| 20 | Հատ | Սրբիչ | | 100.60 | |
| 350 | Զույգ | Մարզական կոշիկ | | 9229.50 | Մ-007-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գավառի տարածաշրջանում |
| 60 | Զույգ | Կանացի կոշիկ | | 1812.00 | |
| 25 | Զույգ | Տղամարդու կոշիկ | | 882.50 | |
| 100 | Հատ | Շապիկ | | 2473.00 | |
| 200 | Հատ | Գլխարկ | | 1080.00 | |
| 20 | Հատ | Շարֆ | | 100.60 | |
| 110 | Հատ | Փափուկ խաղալիք | | 386.10 | |
| 2400 | Հատ | Ձեռքի օճառ | | 960.00 | |
| 35 | Հատ | Գնդակ | | 297.50 | |
| 20 | Հատ | Սրբիչ | | 100.60 | |
| 40 | Հատ | Պայուսակ | | 89.60 | |
| 350 | Զույգ | Մարզական կոշիկ | | 9229.50 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ստեփանավանի տարածաշրջանում |
| 60 | Զույգ | Կանացի կոշիկ | | 1812.00 | |
| 25 | Զույգ | Տղամարդու կոշիկ | | 882.50 | |
| 100 | Հատ | Շապիկ | | 2473.00 | |
| 200 | Հատ | Գլխարկ | | 1080.00 | |
| 30 | Հատ | Շարֆ | | 150.90 | |
| 120 | Հատ | Փափուկ խաղալիք | | 421.20 | |
| 2400 | Հատ | Ձեռքի օճառ | | 960.00 | |
| 35 | Հատ | Գնդակ | | 297.50 | |
| 20 | Հատ | Ծածկոց | | 85.20 | |
| 20 | Հատ | Սրբիչ | | 100.60 | |
| 40 | Հատ | Պայուսակ | | 89.60 | |
| 200 | Զույգ | Մարզական կոշիկ | | 5274.00 | Մ-005-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում |
| 30 | Զույգ | Կանացի կոշիկ | | 906.00 | |
| 15 | Զույգ | Տղամարդու կոշիկ | | 529.50 | |
| 100 | Հատ | Շապիկ | | 2473.00 | |
| 100 | Հատ | Գլխարկ | | 540.00 | |
| 80 | Հատ | Փափուկ խաղալիք | | 280.80 | |
| 1600 | Հատ | Ձեռքի օճառ | | 640.00 | |
| 30 | Հատ | Գնդակ | | 255.00 | |
| 12 | Հատ | Սրբիչ | | 60.36 | |
| 415 | Զույգ | Մարզական կոշիկ | | 10943.55 | Մ-004-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում |
| 30 | Զույգ | Կանացի կոշիկ | | 906.00 | |
| 15 | Զույգ | Տղամարդու կոշիկ | | 529.50 | |
| 50 | Հատ | Շապիկ | | 1236.50 | |
| 200 | Հատ | Գլխարկ | | 1080.00 | |
| 80 | Հատ | Փափուկ խաղալիք | | 280.80 | |
| 1600 | Հատ | Ձեռքի օճառ | | 640.00 | |
| 30 | Հատ | Գնդակ | | 255.00 | |
| 2400 | Հատ | Թղթե խալաթ | | 7577.96 | Մ-003-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Առողջապահական Հաստատություններին |
| 11970 | Հատ | Բժշկական դիմակ | | 6266.15 | |
| 16128 | Հատ | Թղթե անձեռոցիկ | | 4095.91 | |
| 56 | Հատ | Պլաստմասե տարա | | 344.71 | |
| 186 | Հատ | Թաց անձեռոցիկ | | 281.85 | |
| 8 | Հատ | Սպունգ | | 106.40 | |
| 5500 | Հատ | Բժշկական թևկապ | | 2433.33 | |
| 2400 | Հատ | Պոլիէթիլենային տոպրակ | | 225.65 | |
| 3000 | Հատ | Բժշկական ձեռնոց (ոչ ստերիլ) | | 128.11 | |
| 350 | Հատ | Թղթե սավան | | 853.04 | |
| 100 | Հատ | Խողովակ | | 99.02 | |
| 400 | Հատ | Էկստերնալ կատետր | | 1105.07 | |
| 179 | Հատ | Ստերիլիզացման թեստ | | 337.30 | |
| 98 | Հատ | Էլաստիկ բանդաժ | | 35.11 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 7541 | 200970.00 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ - 889 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N 3/3.8-2/14030-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N ՖԲ/ԱնՄ-5/7662-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի N ՎՄ/3-6/11434-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (30 տեղ, 11712 կգ ընդհանուր քաշով, 50000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7000 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի NN Մ-003-Ա , Մ-004-Ա, Մ-005-Ա, Մ-006-Ա, Մ-007-Ա, Մ-008-Ա, Մ-009-Ա, Մ-010-Ա, Մ-011-Ա, Մ-012-Ա, Մ-013-Ա և Մ-014-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

"Վորլդ Վիժն" ՄԲԿ կողմից C 33631 առ 25.09.2012 հայտարարագրով
ԱՄՆ-ից ստացված
ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)

Կոնտեյների համարն է TTNU 462611-4 : Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 57000.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 7000.00 ԱՄՆ դոլար, քաշը` 11712 կգ, տեղերի քանակը` 30:

17/5-11

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 4200 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 7056.00 | Մ-011-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի քաղաքի և Հովունի ու Մարմաշեն գյուղերի կարիքավոր բնակչությանը |
| 4200 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 7056.00 | Մ-014-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում |
| 3300 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 5544.00 | Մ-008-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում |
| 1950 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 3276.00 | Մ-009-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ալավերդու տարածաշրջանում |
| 3000 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 5040.00 | Մ-012-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Կապանի տարածաշրջանում |
| 3000 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 5040.00 | Մ-013-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում |
| 3000 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | 5040.00 | Մ-006-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում |
| 3300 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | **5544.00** | Մ-007-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գավառի տարածաշրջանում |
| 3300 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | **5544.00** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ստեփանավանի տարածաշրջանում |
| 1950 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | **3276.00** | Մ-005-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում |
| 2670 | զույգ | ռետինե կոշիկ կտորե երեսամասով | | **4584.00** | Մ-004-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում |
| | | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **11712** | **57000.00** | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 890 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 24-ի N 3/3.8-1/13785 -12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/11352-12 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա և 2012 թվականի մայիսի 18-ի N Մ-379-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բյուրակն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02220595) 2012 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նյութերի տպագրում՝ 1000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 891 - Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-835-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N 3/3.8-1/14050-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 31-ի N ԱԱ/3-4/11602-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագիրը (2-րդ փուլ)» N Մ-835-Ա որոշման 2-րդ կետի 7-րդ ենթակետում «316000 դրամի չափով» բառերը փոխարինել «1580000 դրամի չափով» բառերով:

2. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մաստեր-Կլիմա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00077507) հետ 2012 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կաթսայի տեղակայման և մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 23000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Գեպոտանիք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00442109) 2012 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված N 15/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ձևավոր ցանկապատի մատակարարում՝ 762500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 892 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՔՐՈՆԻՄԵՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ «ԿԱՅԱՆ-ԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՏԱՆԻՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 3/3.8-1/14049-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N 02/6741-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 26-ի N 03/07-1/12710-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի N ՎՄ/3-4/11437-12 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N 01/10.2/4556-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 11.534.671 դրամ արժողությամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Կայան-ավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախակրթարանի տանիքի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արմիլդիզայնպրոյեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00095281) 2012 թվականի հոկտեմբերի 08-ին կնքված N CCF-1-CT/6 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Տավուշի մարզի Կայան-ավանի N 1 միջնակարգ դպրոցի նախակրթարանի տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 11.034.671 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՊԱՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01567075) 2012 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Տավուշի մարզի Կայան-ավանի N 1 միջնակարգ դպրոցի նախակրթարանի տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում մատուցել տեխնիկական վերահսկողության և շինարարական խորհրդատվության ծառայություններ՝ 500.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՂԵԿԱՎԱՐ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Քրոնիմետ բարեգործական հիմնադրամի

Տնօրեն Աննա Մեղրակյան

19 հոկտեմբերի 2012թ.

«Կայան-ավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է փոխել «Կայան-ավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախակրթարանի մասնաշենքի տանիքը, ամրացնել տանիքի հիմքը, ամրացնել և վերանորոգել երկրորդ հարկ բարձրացող աստիճանները, շենքի եզրագծով տեղադրել սալվածքի եզրաշերտ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝ 55-43-05, 098 98-99-13 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝ 55-43-05, 098 98-99-13 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Տավուշի մարզի գյուղ Կայան-ավանի, «Կայան-ավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ: Բնագավառը՝ կրթություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 11.534.671 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր յոթանասունմեկ) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Անհրաժեշտ գումարները առկա են հիմնադրամի հաշվին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2012թ.-ի դեկտեմբերի 12-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Կայան-ավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, հասցեն՝ Տավուշի մարզ, գ. Կայան-ավան |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ.-ի հոկտեմբերի 18-ից դեկտեմբերի 7-ը |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է իրականացնել վերանորոգման աշխատանքներ 2012թ.-ի հոկտեմբերի 18-ից մինչև դեկտեմբերի 7-ը: Ընդհանուր վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ է 11.034.671 դրամ, տեխնիկական վերահսկողության համար՝ 500.000 դրամ: Նյութական մասի արժեքը ընդհանուրի մեջ կազմում է մոտ 6.400.000 (վեց միլիոն չորս հարյուր հազար) դրամ: Աշխատանքների կազմակերպման և վերահսկման համար կծախսվի մոտ 5.135.000 (հինգ միլիոն հարյուր երեսունհինգ հազար) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի վերանորոգման աշխատանքների իրականացման համար պայմանագիր է կնքվել «Արմիլդիզայնպրոեկտ» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 11.034.671 դրամ: Տեխնիկական վերահսկողության համար պայմանագիր է կնքվել «ՊՎ» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 500.000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամը համագործակցում է ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Շինարարական աշխատանքների վերահսկողությունը կիրականացվի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Ծրագրի իրականացման հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 893 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Այբ» կրթական հիմնադրամի 2012 թվականի հոկտեմբերի 17-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 հոկտեմբերի 26-ի N 3/3.8-1/13866-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի N ՎՄ/3-4/11436-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա որոշման խմբագրությամբ) որոշման 1-ին կետում «739.125.000 դրամ» բառերը փոխարինել «904.500.000 դրամ» բառերով:

2. «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (լրամշակված ծրագիրը կցվում է):

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

14/2-3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Այբ» կրթական հիմնադրամի
Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյանի կողմից
14-ը նոյեմբերի, 2011թ.

# «Այբ ավագ դպրոց»
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրով նախատեսվում է ստեղծել ավագ դպրոց 2 մասնաշենքով՝ 216 երեխայի համար: Դպրոցը դառնալու է հայկական առաջին դպրոցական ավանի հիմնական բաղադրիչը, ապահովելու է բարձրորակ կրթություն՝ որակյալ ուսուցիչների, հագեցած ու արդիական կրթական միջավայրի, աշխարհի լավագույն դասագրքերի օգնությամբ: Ավագ դպրոցը ստեղծվում է ի կատարումն ՀՀ կառավարության թիվ 50Ա առ 14.01.2010թ. որոշմամբ ամրագրված «Այբ կրթական հանգույց» ծրագրի:<br><br>**Ծրագրի անհրաժեշտությունը**<br>21-րդ դարում երկրի մրցունակության ապահովման կարևորագույն գործոնը որակյալ կրթությունն է: Նման կրթություն տալու, ուսյալ, առաքինի, ապագան կերտելու պատրաստ սերունդ ձևավորելու նպատակով էլ ստեղծվում է «Այբ» ավագ դպրոցը: Դպրոց, որը կդառնա 21-րդ դարի <u>հայկական դպրոցի</u> օրինակելի մոդել և իր դրական ազդեցությունը կունենա ողջ կրթական համակարգի վրա: Հանդիսանալով ոչ առևտրային կազմակերպություն՝ «Այբ»-ն իր գործունեությունն ու զարգացումն ապահովում է բացառապես բարերարների նվիրատվությունների հաշվին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակը Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է, համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի դրույթների: Մասնավորապես՝ ծրագրի շրջանակներում Հիմնադրամի սեփական միջոցների և հանգանակությունների հաշվին արտերկրից ներմուծվող և ՀՀ-ի տարածքում ձեռքբերվող տպագիր և էլեկտրոնային ուսումնական նյութերի, մասնագետների վերապատրաստման,նախագծային, փորձաքննական, շինարարական աշխատանքների և շինանյութերի, սարքավորումների, կապուղիների, կահույքի, տեխնիկայի ազատումը մաքսային պարտադիր վճարումներից և ԱԱՀ-ից: |
| 3. | Բարեգործը | «Այբ» կրթական հիմնադրամին նվիրաբերված միջոցների հաշվին (աջակիցների ցանկը ներկայացված է «Այբ» ավագ դպրոց գրքույկում՝ «Աջակիցներ» բաժնում) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «Այբ» կրթական հիմնադրամը, որի տվյալներն են՝ |

| | | |
|---|---|---|
| | 14/Բ.3 | ▪ ՀՎՀՀ 01558429<br>▪ Հասցեն՝ Երևան 0009, Կորյունի 19ա<br>▪ Հաշվարկային հաշիվ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ 005-053483-001<br>▪ Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյան:<br>«Այբ» կրթական հիմնադրամի իրականացրած «ԱյբԼաբ» ծրագրի շրջանակներում Երևանի Ֆիզմաթ դպրոցի ֆիզիկայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը <u>ռրակվել է բարեգործական</u>՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 14-ի N Մ-851-Ա որոշմամբ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսվում է Երևանում՝ Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում կառուցել, կահավորել, ուսումնական, լաբորատոր և համակարգչային սարքավորումներով հագեցնել, ուսումնական տպագիր և էլեկտրոնային նյութերով (այդ թվում՝ դասագրքեր, ուսումնական տպագիր և տեսաձայնային ձեռնարկներ) զինել «Այբ» ավագ դպրոցը՝ իր երկու մասնաշենքերով և օժանդակ կառույցներով:<br>Ծրագրի բնագավառը՝ հանրակրթություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 904.500.000 դրամ, որը ներառում է շինարարության, սարքավորումների և տեխնիկայի ծախսերը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողները «Այբ» ավագ դպրոցի (**«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ**) սաներն են: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 2011թ. նոյեմբերի 15, ավարտը՝ 2013թ. մայիսի 31, տևողությունը՝ 17 ամիս: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը նախատեսում է «Այբ» ավագ դպրոցի Ա մասնաշենքի կահավորում, սարքավորումներով և տեխնիկայով հագեցում, դպրոցական ավտոբուսների գնում, ինչպես նաև դպրոցի Բ մասնաշենքի և կաթսայատան կառուցում, կահավորում, սարքավորումներով և տեխնիկայով հագեցում, տարածքի բարեկարգում:<br>Աշխատանքները կավարտվեն 2013թ.մայիսին:<br>Նկարագրված աշխատանքներն իրականացնելու են համապատասխան ոլորտներում մասնագիտացած կազմակերպությունները, ինչպես նաև «Այբ» կրթական հիմնադրամը:<br>Միջոցառումների ծախսերը կկազմեն 904.500.000 դրամ, որից Շինարարություն՝ 744.750.000 դրամ, Տեխնիկա/սարքավորումներ՝ 159.750.000 դրամ:<br>Ընդհանուր առմամբ նախատեսված է 292.190.000 դրամի ներմուծում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հետևյալ ապրանքների և ծառայությունների ձեռքբերում. |



14/Բ.3

| | '000 AMD |
|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ (Հազար ՀՀ դրամ)** | **904,500** |
| **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** | **744,750** |
| Այդ թվում՝ | |
| **ՀՀ-ից** | **575,375** |
| **Ներմուծում** | **169,375** |
| Նախագծում, փորձաքննություն, վերահսկողություն | 8,500 |
| Շինարարություն | 520,000 |
| Այդ թվում՝ ներմուծվող շինարարական նյութեր | 100,000 |
| Կահավորում | 112,500 |
| Այդ թվում՝ ներմուծվող կահույք | 11,250 |
| Անվտանգության համակարգեր, սերվեր | 66,250 |
| Այդ թվում՝ ներմուծվող սարքավորումներ | 53,125 |
| Բարեկարգում/ցանկապատում/կոմունիկացիաներ | 37,500 |
| Այդ թվում՝ ներմուծում | 5,000 |
| **ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՏԵԽՆԻԿԱ** | **159,750** |
| Այդ թվում՝ | |
| **ՀՀ-ից** | **36,935** |
| **Ներմուծում** | **122,815** |
| Տեղեկատվական համակարգեր/ուսումնական ծրագրեր | 1,875 |
| Համակարգիչներ, ներկայացման և կազմ.տեխնիկա, սարքավորումներ | 86,875 |
| Այդ թվում՝ ներմուծվող սարքավորումներ | 72,815 |
| Խոհանոցային սարքավորումներ | 41,000 |
| Այդ թվում՝ ներմուծվող սարքավորումներ | 26,000 |
| Դպրոցական ավտոբուսներ | 30,000 |
| Այդ թվում՝ ներմուծում | 24,000 |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսված է համագործակցել ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ա) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:<br>բ) «Այբ»-ը կրթական հիմնադրամ է՝ ոչ առևտրային կազմակերպություն,և իր գործունեությամբ հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին ու վերահսկվում է նրա կողմից: «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են.<br>1. Տեր Մեսրոպ քհն Արամյան, նախագահ (Հայաստան)<br>2. Արամ Փախչանյան (Ռուսաստան)<br>3. Դավիթ Յան(Ռուսաստան)<br>4. Կարեն Մուսաեյան(ԱՄՆ)<br>5. Կարո Սարգսյան (Ռուսաստան)<br>6. Դավիթ Փախչանյան (Ռուսաստան):<br><br>Ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կտրվի ծրագրի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 894 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՔՐՈՆԻՄԵՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՐԵՎԱՆԻ «ԹԻՎ 9 ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 5-ի N 3/3.8-1/14247-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 02/6948-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 7-ի N ՀԴ/22/11073-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 6-ի N ՎՄ/3-4/11776-12 և Երևանի քաղաքապետարանի 2012 թվականի նոյեմբերի -ի N 01/08.1/2473-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 15.422.671 դրամ արժողությամբ Երևանի «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արխինովա» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Հանրապետության 76/2) 2012 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված N CCF-1-CT/7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Հարավ-արևմտյան թաղամասի թիվ 9 մանկական պոլիկլինիկայի տարածքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 13.512.671 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ինտեռոս-Պառեքսիգլոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03533676) 2012 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևան քաղաքի Անդրանիկի 2ա փողոցի թիվ 9 մանկական պոլիկլինիկայի գազաֆիկացման աշխատանքների իրականացում՝ 1.510.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՊԱՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02600555) 2012 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևան քաղաքի Հարավ-արևմտյան թաղամասի թիվ 9 մանկական պոլիկլինիկայի մասնակի վերանորոգման աշխատանքների ընթացքում տեխնիկական վերահսկողության և շինարարական խորհրդատվության ծառայությունների մատուցում՝ 400.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Քրոնիմետ բարեգործական հիմնադրամի

Տնօրեն Աննա Սեդրակյան

31 հոկտեմբերի 2012թ.

«Երևանի «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ մասնաշենքի վերանորոգում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերանորոգել Երևանի «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ-ի մասնաշենքի 5 սենյակներ՝ աուտիզմ, մանկական ուղեղային կաթված, մտավոր, հոգեկան, ֆիզիկական, լսողական և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների վաղ ախտորոշման և միջամտության ծառայության իրականացման համար: Նախատեսվում է նաև գազաֆիկացնել պոլիկլինիկայի շենքը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝55-43-05, 098 98-99-13 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝55-43-05, 098 98-99-13 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Երևանի «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ: Բնագավառը՝ առողջապահություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 15.422.671 (տասնհինգ միլիոն չորս հարյուր քսաներկու հազար վեց հարյուր յոթանասունմեկ) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Անհրաժեշտ գումարները առկա են հիմնադրամի հաշվին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2013թ. հունվարի 20-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևանի «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ, հասցեն՝ ք, Երևան, Անդրանիկի 2Ա |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ.-ի հոկտեմբերի 22-ից հունվարի 20-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է իրականացնել վերանորոգման աշխատանքներ 2012թ.-ի հոկտեմբերի 22-ից մինչև 2013թ. հունվարի 20-ը: Ընդհանուր վերանորոգման աշխատանքների և գազաֆիկացման համար անհրաժեշտ է 15.022.671 դրամ, տեխնիկական վերահսկողության համար՝ 400.000 դրամ: Նյութական մասի արժեքը ընդհանուրի մեջ կազմում է մոտ 6.500.000 (վեց միլիոն հինգ հարյուր հազար) դրամ: Աշխատանքների կազմակերպման և վերահսկման համար կծախսվի մոտ 8.900.000 (ութ միլիոն ինը հարյուր հազար) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի վերանորոգման աշխատանքների իրականացման համար պայմանագիր է կնքվել «Արխինովա» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 13.512.671 դրամ: Գազաֆիկացման համար պայմանագիր է կնքվել «Ինտեռոս-Պառեքսգլոմ» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 1.510.000: Տեխնիկական վերահսկողության համար պայմանագիր է կնքվել «ՊՄՎ» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 400.000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամը համագործակցում է Երևանի քաղաքապետարանի, Առողջապահության նախարարության, «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի, «Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Շինարարական աշխատանքների վերահսկողությունը կիրականացվի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Ծրագրի իրականացման հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 895 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N Մ-467-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 3/3.8-1/14167-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 5-ի N ՎՄ/3-4/11765-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ հարավային Կովկասում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-467-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՏՈՍՊ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2012 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք տեղական համայնքներ Հարավային Կովկասում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Շիրակի մարզի 5 թիրախային համայնքներում ձևավորված արձագանքման կամավորական թիմերի անդամներին տրամադրել 100 հատ բաճկոն, 100 հատ տաբատ, 100 հատ ժիլետ՝ «փրկարար», 100 հատ շապիկ և ուսապարկ՝ համաձայն կցված պահանջների և ներկայացված չափերի՝ 5.840.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ | Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 896 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-182-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2012 թվականի նոյեմբերի 3-ի N Կ-03/11 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ջեյթուն» ուսումնական և աջակցման կենտրոնի հիմնադրում» ծրագրի մասին» N Մ-182-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «Մայիս 2010 թ. – դեկտեմբեր 2012 թ.» բառերը փոխարինել «Մայիս 2010 թ. – դեկտեմբերի 31-ը 2015 թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ - 897 - Ա**

**քաղ. Երևան**

# «ՀԱՅ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԲԸ-ԻՆ ԲՈՒԺՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ-ՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 2-ի 3/3.8-2/14250-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 02/6950-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 6-ի N ԴԴ/2210982-12, Հայաստանի Հանրապետության կառավարու-թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 5-ի N ՎՄ/3-6/11725-12 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 2-ի N 01/5262-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայ ավստրիական բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 49753.19 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ին բուժսարքավորումների տրամադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայ ավստրիական բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության հաշվեով ստացված բուժսարքավորումները (44253.19 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5500 եվրո, ցանկը կցվում է, «Շիրակ» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. «Հայ ավստրիական բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպու-թյանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
<<Հայ Ավստրիական Բարեգործական Կենտրոն>>
ՀԿ-ի նախագահ՝ Ա.ԿԻՐՂԻՆՅԱՆԻ կողմից
30 հոկտեմբերի 2012թ.

# ԾՐԱԳԻՐ

## <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ին բուժսարքավորումների տրամադրում

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է հնարավորություն ունենալ ժամանակակից եվրոպական չափանիշներին համապատասխան 30մահճակալ ծավալով ծննդօգնության և գինեկոլոգիայի բաժանմունք |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի,պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Ամբողջ ծրագիրը ֆինանսավորվում է <<Գյումրու Ավստրիական մանկական հիվանդանոցին օժանդակող միություն>> ՀԿ-ի կողմից: Հասցեն՝ A -3270,Ավստրիա,ք.Վիեննա,Շմելցերկասսե 19 |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն իրականացվում է <<Հայ Ավստրիական Բարեգործական >> ՀԿ-ի կողմից՝ ՀՎՀՀ 05533442, իրավաբանական հասցեն՝ ք.Գյումրի Գ.Նժդեհի 5 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, Գ.Նժդեհի 5<br>Բնագավառը՝ առողջապահական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 49753.19 եվրոյին համարժեք ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թ. Հոկտեմբերի 30-ից մինչև 2013թ. մարտի 31-ը |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ա/ Բեռի ստացում և մաքսային ձևակերպում՝ հոկտեմբեր-նոյեմբեր 2012թ.,ընդհանուր բյուջեն 49753.19 եվրոյին համարժեք ՀՀ դրամ<br>բ/ Բեռի անհատույց հանձնում <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ին |
| 10 | Ձեռք բերվող(ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը,ծավալները և նախատեսվող գինը | Ներմուծվում են բժշկական սարքավորումներ և պարագաներ՝ 44253.19 եվրոյին համարժեք ՀՀ դրամ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 5500 եվրոյին համարժեք ՀՀ դրամ |
| 11 | Ծրագրի իրականավման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ Առողջապահության նախարարության և Շիրակի մարզպետարանի հետ համագործակցությամբ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացքը վերահսկվում է ծրագիրը ֆինանսավորող կազմակերպության կողմից,ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություն է ներկայացվելու ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին |

## <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ին տրամադրվելիք բուժսարքավորումների ցանկ

| Անվանում | Articles | Քանակ | Արժեք |
|---|---|---|---|
| Էնդոսկոպ | Endoskop | 1 | 400.0 |
| Նորածինների մահճակալներ | Betten für Säuglinge | 10 | 600.0 |
| Ֆոտոթերապիայի լամպ | Phototherapielampe | 1 | 300.0 |
| Հիվանդասենյակի տումբաներ | Nachtkästchen mit Esstischklappe | 2 | 100.0 |
| Մանկաբարձական սեղաններ | Entbindungsbett | 3 | 6000.0 |
| Նորածնի փաթաթման սեղան | Wickeltische | 5 | 250.0 |
| Նոութբուք | Laptops | 4 | 400.0 |
| Տաքացնող լամպ | Wärmelampe | 1 | 200.0 |
| Անզգայացման ապարատ | Narkosegerät Dräger | 1 | 3000.0 |
| Կյուվեզ | Inkubator | 2 | 1000.0 |
| Լուծույթների ցրիչ սարք | Medikamentenvernebler | 1 | 300.0 |
| Ռեանիմացիոն կոմպլեքս Ameda | Reanimationseinheit Ameda | 2 | 3000.0 |
| Վիրահատական սեղան Blanco | OP-Tisch für Gynäkologie ( Blanco) | 1 | 2000.0 |
| Վիրահատական սեղան Blanco հենք | OP-Tisch Blanco- Auflage | 1 | 300.0 |
| Գործիքների շարժասայլակ | Gerätewagen mit Laden | 3 | 150.0 |
| Այցելուների աթոռներ | Besuchersessel | 1 | 30.0 |
| Բժշկի աթոռ | Arzthocker | 1 | 30.0 |
| Շտատիվներ շարժական | Mobile Infusionshalterungen | 3 | 90.0 |
| Նեգատասկոպ | Röntgenbildbetrachter | 2 | 300.0 |
| Բուժգործիքների սեղան | Instrumententisch | 3 | 300.0 |
| Քարթերի արկղ | Karteiwagen | 1 | 30.0 |
| Էնդոսկոպիկ սարքավորման շարժասայլակ | Endoskopiewagen | 1 | 40.0 |
| Վիրակապական սեղան | Untersuchungsliegen | 3 | 300.0 |
| Հետազոտման/զննման լույս | Untersuchungsleichte | 1 | 100.0 |
| Ուլտրաձայնային հետազոտման ապարատ | Ultraschallgerät s/w,Siemens sonoline | 1 | 1500.0 |
| Ավտոկլավ | Autoklav | | 1100.0 |
| Կոլպոսկոպ | Kolposkop | 3 | 2700.0 |
| Վիրակապական անձեռոցիկներ | Papierkübel mit Verbandsmaterial | 1 | 30.0 |
| Գրասեղանային աթոռ | Schreibtischsessel | 3 | 150.0 |
| Գինեկոլոգիական զննման սեղան | Gynäkologische Untersuchungsstühle | 2 | 2000.0 |
| Վիրահատարանի լվացման խոզանակներ | Kasetten mit OP-Bürsten | 2 | 50.0 |
| Ստերիլիզատոր | Dampfsterilisator | 1 | 200.0 |
| Հենակներ | Krücken | 2 | 20.0 |
| Լույսի աղբյուր | Lichtquelle | 2 | 500.0 |

| | | | |
|---|---|---|---|
| Էլեկտրոկոագուլյատոր | HF Chirurgiegerät | 1 | 1000.0 |
| Ներծծման ձուրք/ասպիրատոր | Suchionpump | 1 | 150.0 |
| Էնդոսկոպիկ սարքավորման շարժասայլակ | Endoskopieliege | 1 | 100.0 |
| Առաջին օգնության արկղիկ | Kindernotfallkoffer( leer) | 1 | 20.0 |
| Օդափոխման սարքավորում | Heizlüfter | 1 | 100.0 |
| Ապակյա տարաներ փոխադրող սայլակ | Flascenwagen mit Laden | 1 | 100.0 |
| Բիլիբեդ | Bilibed | 1 | 300.0 |
| Միկրոտոմ Leica | Microtom Leica | 1 | 100.0 |
| Սառը լույսի աղբյուր | Kaltlichtquelle | 1 | 250.0 |
| Դեֆիբրիլյատոր մարտկոցով | Defibrillator mit Ladestation | 2 | 2000.0 |
| Ստերիլիզատոր | Heissluftsterilisator | 1 | 400.0 |
| Ինտենսիվ հսկման մոնիտոր | Patientenmonitor Datex | 2 | 600.0 |
| Գրասեղան | Schreibtisch | 2 | 200.0 |
| Տականք | Nirostaschüssel | 2 | 20.0 |
| Մանկաբարձա-գինեկոլոգիական գործիքներ | Instrumente für Gynäkologie und Geburtshilfe | | 9443.19 |
| Գինեկոլոգիական վիրահատական տարբեր գործիքներ | DiverseInstrumente für gynökologische Operationen | | 1500.0 |
| Պարագաներ | Zubehör | | |
| Սոնոժել | Ultraschallgel | 8 | |
| Ձեռնափայտ | Fussschalter | 1 | |
| Վիրակապական նյութեր | Abdominalbinden | 2 | |
| Միջադիր/պամպերս | Slipeinlagen | 10 | |
| Մեզընդունիչ | Harnbehälter | 5 | |
| ԷՍԳ ժապավեն | EKG- Schreibpapier in Rollen | 5 | |
| Մանժետներ և էլեկտրոդներ | Manschatten und Elektroden | 17 | |
| Փաթաթան տրոմբոզային | Thrombosestrumpf | 1 | |
| Չեզոք էլեկտրոդ | Neutralelektrode | 1 | |
| Մոնոպոլյար լար | Monopolarkabel | 1 | |
| CO2 սենսոր լար | CO2- sensorkabel | 1 | |
| Dräger և Spacelab սարքերի պահեստամասեր | Ersatzteile für Dräger und Spacelab | 4 | |
| Բիպոլյար լար պինցետով | Bipolarkabel mit Pinzette | 1 | |
| ԷՍԳ լար | EKG- Kabel | 1 | |
| Կողմնային գրպան դեֆիբրիլյատորի | Seitentaschen für Defibrillator | 1 | |
| Գրքեր „ Շահագործման կանոններ„ | Bedienungsanleitungen | 5 | |
| Տարբեր պահեստամասեր | div. Einsätze,Kabel,Dichtungen, Sensoren,Module,Verbandsmaterial u. Beatmungsschläuche | | |
| Ընդամենը պարագաներ | Zubehör gesamt | | 500.0 |
| Ընդամենը | Gesamt | | 44253.19 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ-898-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Առաքելություն Արևելք» միջազգային օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 3/3.8-2/14165-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N ԴԴ/22/10787-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի N ՎՄ/3-4/11516-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ - ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրի մասին N Մ-318-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-738-Ա, 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-862-Ա և 2012 թվականի օգոստոսի 31-ի N Մ-699-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) ծրագրի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի 1-ին փուլն իրականացվելու է 2010թ. հունվարի 11-ից մինչև 2013 մայիսի 31-ը: |

2) ծրագրի 10-րդ կետի 11-րդ և 13-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | Ապրանքի (ծառայության) անվանումը | Նախնական 3 տարվա համար | Նախատեսվող գինը, եվրո | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին տարի (11.01.2010թ.-30.09.2010թ.) | 2-րդ տարի (01.10.2010թ 30.09.2011թ) | 3-րդ տարի (01.10.2011թ-30.09.2012թ) | ընդամենը |
| 11. | Գրասենյակային և | 2320 | 9,840 | 10,203 | 3,654 | 23,697 |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գրենական պարագաներ | | | | | |
| 13. | ֆինանսական աուդիտ | 3 | - | - | 25,000 | 25,000 |

3) ծրագրի 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով.

| | |
|---|---|
| 15. | 2012թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2013թ. մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածում պլանավորվում է կատարել հետևյալ գնումները՝<br>1) ֆինանսական աուդիտ՝ 11000 եվրո արժեքով.<br>2) բենզին՝ 3000 եվրո արժեքով.<br>3) տպագրություն՝ 1500 եվրո արժեքով.<br>4) բժշկական պարագաներ՝ 2500 եվրո արժեքով: |

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ-899-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-850-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱ-ՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2012 թվականի հոկտեմբերի 26-ի N 412 գրությունը, **ո ր ո շ ու մ  է**.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին (Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)» N Մ-850-Ա որոշման 1-ին կետում «21050 հնդկական ռուփի» բառերը փոխարինել «20825 հնդկական ռուփի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ-900Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-840-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ( «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2012 թվականի հոկտեմբերի 26-ի N 411 գրությունը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին (Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)» N Մ-840-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «3294.60 հնդկական ռուփի» բառերը փոխարինել «3303 հնդկական ռուփի» բառերով.

2) «8.8 կգ քաշով» բառերը փոխարինել «5.5 կգ քաշով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 901 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵԵՍՏՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 26-ի N 3/3.8-2/13864-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 24-ի N ԴԴ/22/10441-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի N ՎՄ/3-6/11514-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից՝ Ֆրիդա Ջորդանի կողմից «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամի հասցեով որպես օժանդակություն ուղարկված բեռի (BECKMAN X-15R լաբորատոր ցենտրիֆուգ՝ իր պարագաներով, 3 տեղ, 170 կգ ընդհանուր քաշով, 10740.42 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 2458 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:
2. «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ-902-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)**

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 3/3.8-1/14171-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի N ՎՄ/3-4/11515-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրի մասին» N Մ-318-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-738-Ա, 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-862-Ա, 2012 թվականի օգոստոսի 31-ի N Մ-699-Ա և նոյեմբերի -ի N Մ- -Ա որոշումների խմբագրություններով) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մագգա» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08200226) 2012 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական սարքավորումների և բժշկական պարագաների մատակարարում՝ 9300000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ-903-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-791-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության 2012 թվականի հոկտեմբերի 16-ի N Н-8/12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 24-ի N3/3.8 -1/13784-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N ՎՄ/3-4/11174-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից Վանաձոր քաղաքում իրականացվող «Օրրան-Կրիկորյան» ցերեկային խնամքի կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-794-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 31-ի N Մ-731-Ա որոշման խմբագրությամբ) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝ որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է).

1) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 3-րդ ենթակետում «17000000 դրամ» բառերը փոխարինել «14221000 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր՝ 8-րդ և 9-րդ ենթակետերով.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8. | 04.10.12 | N 57 | «ՍՌՍ-Ջվեզդա» ՍՊԸ | անվտանգության համակարգերի մատակարարում և մոնտաժում | 1979000 |
| 9. | 09.10.12 | V-1/10-12 | «Ալբեդո Գրաֆիքս» ՍՊԸ | ծավալային տառերով ցուցանակների պատրաստում | 800000 |

2. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀՎՀ 02552842) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՍՌՍ-Ջվեզդա» ՍՊԸ -ի հետ (ՀՎՀՀ՝ 00086643) 2012 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված N 57 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անվտանգության համակարգերի մատակարարում և մոնտաժում՝ 1979000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալբեդո Գրաֆիքս» ՍՊԸ -ի հետ (ՀՎՀՀ՝ 00085331) 2012 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված N V-1/10-12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծավալային տառերով ցուցանակների պատրաստում՝ 800000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 904 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-119-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 3/3.8-1/14154-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 31-ի N ՎՄ/3-4/11604-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2011-2012 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-119-Ա որոշմամբ (2011 թվականի ապրիլի 1-ի N Մ-203-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 01511187) 2012 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լսարանների և սարքավորումների սպասարկում 2012 թվականի հոկտեմբերի 26-ին, 27-ին ու 28-ին հանդիպումներ անցկացնելու համար՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 905 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (2)

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 23-ի N 3/3.8-2/13680-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 17-ի N ԴԴ/22/10214-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N ԱԱ/3-6/11112-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով ստացված բեռը (թեստ հավաքածուներ՝ Murex HIV AG/AB combination, ELISA kit 96 tests - 300 տուփ և ծծմբական թթու 15x60 մլ. - 2 արկղ, 3 տեղ, 210 կգ քաշով, 27910.36 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1068.9 եվրո, «Ջվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 906 -Ա**
**քաղ. Երևան**

## «Ս. Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 26-ի N 3/3.8-2/13865-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 26-ի N ԴԴ/22/10608-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 26-ի N ՎՄ/3-6/11405-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից՝ «Kato Pharmaceuticals» ոչ առևտրային կազմակերպության կողմից «Ս. Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով որպես օժանդակություն ուղարկված բեռի (50 սրվակ Sodium chloride for injection (10մլ) և 100 սրվակ Steril water for injection (10մլ), 1 տեղ, 3.63 կգ ընդհանուր քաշով, 198 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 150 ԱՄՆ-ի դոլար, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Ս. Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ծնակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 907 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ՎԻՔԻՄԵԴԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 3/3.8-2/14166-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 31-ի N 03/07-1/12845-12, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 2012 թվականի նոյեմբերի 2-ի N 01/12.1/5869-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N ՎՄ/3-6/11563-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Վիքիմեդիա» հիմնադրամի կողմից Հայաստանում «Վիքիմեդիա» հիմնադրամի համակարգող Սուսաննա Մկրտչյանի անունով ուղարկված բեռի (շապիկներ, 4 տեղ, 49.9 կգ ընդհանուր քաշով, 2081 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Շապիկներն անհատույց բաշխվելու են Հայաստանում առաջին միջազգային Վիքիկոնֆերանսի մասնակիցներին:

2. Հայաստանում «Վիքիմեդիա» հիմնադրամի համակարգող Սուսաննա Մկրտչյանին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ-908-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N 3/3.8-2/14037-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 03/07-1/12987-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի N ՎՄ/3-6/11483-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Գերմանական Վոլքսվագեն ֆոնդի դրամաշնորհի միջոցներով գնված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված երկու բեռի՝ Axio Vert.A1 MAT միկրոսկոպ (1 տեղ, 62 կգ ընդհանուր քաշով, 18658 եվրո արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ) և ИЛ 10-1.5 գերձայնային գեներատոր ու գեներատորին պիեզոէլեկտրական փոխակերպիչ միացնելու լրացուցիչ հարմարանք (1 տեղ, 11 կգ ընդհանուր քաշով, 3916 եվրո արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ - 909 -Ա**
**քաղ. Երևան**

# «ՇԵՆԳԱՎԻԹ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 3/3.8-2/14155-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 30-ի N ԴԴ/22/10704-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի N ՎՄ/3-6/11482-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Շենգավիթ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով որպես օժանդակություն ուղարկված բեռի (563 տեղ, 15622 կգ ընդհանուր քաշով, 199460 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 15350 ԱՄՆ-ի դոլար, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:
2. «Շենգավիթ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Ոչ պաշտոնական թարգմանություն

| Արկղի N | Միավոր | Անվանում | Գինը | Քաշը կգ |
|---|---|---|---|---|
| Կոնտեյներ ZCSU8486429 | | | | |
| 1 | կտոր/տուփ | Ողնաշարային անզգայացման հավաքածուներ (նց դեղորայքի), ստերիլ ձեռնոցներ, կարիչ | $400,00 | 2 |
| 2 | կտոր/տուփ | Կիֆոքայոններ, տրախեալ խողովակներ, ոլոքային սեղմիչներ | $520,00 | 3 |
| 4 | կտոր/տուփ | Բիլիար դրենաժներ, երիկամային լայնիչներ | $480,00 | 7 |
| 5 | կտոր/տուփ | Կրծքազեղձի պոմպային սարքեր, PDR | $140,00 | 5 |
| 6 | կտոր/տուփ | Bx ասեղներ, կրծքավանդակի դրենաժային խողովակներ | $520,00 | 23 |
| 7 | կտոր/տուփ | Երակային կանուլաներ | $220,00 | 11 |
| 8 | կտոր/տուփ | Շնչառական և տրախեալ խողովակներ, ն/ե համակարգեր | $210,00 | 7 |
| 9 | կտոր/տուփ | Ատամնավոր սեղմիչներ, ներերակային համակարգեր | $240,00 | 2 |
| 10 | կտոր/տուփ | Միզածորանային ստենտեր, ակցաններ | $320,00 | 15 |
| 12 | կտոր/տուփ | Դեկուբիտալ տակդիրներ, Ֆոլեյի կաթետրներ, էնդոսկոպիկ աբլացիայի հավաքածուներ | $80,00 | 38 |
| 13 | կտոր/տուփ | Թոռակարներ,ստամոքսային և աղիքային կերակրման խողովակներ | $180,00 | 10 |
| 14 | կտոր/տուփ | CVP և պերիկարդոցենտեզի հավաքածուներ | $330,00 | 19 |
| 15 | կտոր/տուփ | Աջ, ձախ և անձնական միզային կաթետրներ | $410,00 | 17 |
| 16 | կտոր/տուփ | Դիմակներ,հարմոնիկ սկալպելներ | $310,00 | 16 |
| 17 | կտոր/տուփ | Ոսկրային բիոպսիայի հավաքածուներ | $350,00 | 7 |
| 19 | կտոր/տուփ | Վիրակապության ստերիլ հավաքածուներ, արյան զարկերակային ճնշման չափիչի տնակապեր | $60,00 | 9 |
| 20 | կտոր/տուփ | Ն/ե համակարգեր | $80,00 | 7 |
| 21 | կտոր/տուփ | Ստերիլ ձեռնոցներ, գլխարկներ | $100,00 | 10 |
| 22 | կտոր/տուփ | Արտածծման խողովակներ, վիրաբուժական դիմակներ | $50,00 | 4 |
| 23 | կտոր/տուփ | Հաղորդակցիչ լար, մեկուսիչ խալաթ | $60,00 | 10 |
| 24 | կտոր/տուփ | Լիգաշուրի ձեռքի էնդոսկոպիկ գործիքներ | $1 200,00 | 40 |
| 25 | կտոր/տուփ | Բախիլներ, գլխարկներ | $40,00 | 4 |
| 27 | կտոր/տուփ | Դատասկոպներ | $440,00 | 27 |
| 29 | կտոր/տուփ | Լարինգեալ դիմակներ, կոնվերտեր | $270,00 | 14 |
| 30 | կտոր/տուփ | Վակուում ռեգուլյատորներ | $90,00 | 12 |
| 31 | կտոր/տուփ | ENSEAL ձեռքի գործիքներ | $650,00 | 22 |
| 32 | կտոր/տուփ | Արտածծման խողովակներ, դատասկոպներ | $480,00 | 24 |
| 35 | կտոր/տուփ | 2 օրթոպեդիկ փակուռումներ, մալուխ | $420,00 | 8 |
| 38 | կտոր/տուփ | Ոլոքային սեղմիչներ, ԷՍԳ թուղթ | $480,00 | 19 |
| 39 | կտոր/տուփ | Ոլոքային սեղմիչներ, թոռակարներ, պարանոցային վիրակապեր | $480,00 | 22 |
| 40 | կտոր/տուփ | Կրծքային կարիչներ, դաստակային սեղմիչներ, անձնական կաթետերներ | $680,00 | 15 |
| 41 | կտոր/տուփ | Ազդրային վիրակապեր | $140,00 | 7 |
| 42 | կտոր/տուփ | Մազի սեղմիչներ, քարթրիջներ, վիրակապեր, | $330,00 | 6 |
| 50 | կտոր/տուփ | Արագ ներարկման համակարգեր, տաքացնող խողովակներ | $55,00 | 5 |
| 51 | կտոր/տուփ | Դիմակներ, արտածծման խողովակներ | $60,00 | 8 |
| 52 | կտոր/տուփ | Դիմակներ, թղթյա խալաթներ | $80,00 | 6 |
| 55 | կտոր/տուփ | Մաշկի նախավիրահատական մշակման հավաքածուներ /առանց դեղորայքի/ | $80,00 | 7 |
| 57 | կտոր/տուփ | Էնդոպատ դիսեկտոր | $430,00 | 5 |
| 65 | կտոր/տուփ | Լարինգոսկոպեր, էնդոտրախեալ խողովակներ | $430,00 | 6 |
| 66 | կտոր/տուփ | Ստերիլ ձեռնոցներ | $120,00 | 7 |
| 67 | կտոր/տուփ | Ոչ ստերիլ ձեռնոցներ | $60,00 | 10 |
| 68 | կտոր/տուփ | Պուլսօքսիմետր, ԷՍԳ տերմո փաթեթ | $280,00 | 12 |
| 74 | կտոր/տուփ | Քար հեռացնելու զամբյուղներ | $440,00 | 2 |
| 77 | կտոր/տուփ | Վիրաբուժական ձեռնոցներ, ուռոլոգիական գործիքներ | $110,00 | 5 |
| 97 | կտոր/տուփ | MEDTRONIC լայնիչներ | $160,00 | 2 |
| 103 | կտոր/տուփ | Թոռակար, SEPTRA թաղանթներ | $550,00 | 5 |
| 105 | կտոր/տուփ | Ստերիլ բամբակյա գնդիկներ, ծածկոցներ | $120,00 | 4 |
| 106 | կտոր/տուփ | Ողնային կոտրվածքի բեկակալ, էնդոտրախեալ խողովակներ | $350,00 | 7 |
| 108 | կտոր/տուփ | Վարագույրներ | $340,00 | 16 |
| 109 | կտոր/տուփ | Վարագույրներ | $340,00 | 16 |
| 110 | կտոր/տուփ | Վարագույրներ | $340,00 | 16 |
| 115 | կտոր/տուփ | Վարագույրներ | $340,00 | 16 |
| 116 | կտոր/տուփ | Վարագույրներ | $340,00 | 16 |
| 124 | կտոր/տուփ | Վարագույրներ | $340,00 | 16 |
| 125 | կտոր/տուփ | Վարագույրներ | $340,00 | 16 |
| 126 | կտոր/տուփ | Վարագույրներ | $340,00 | 16 |
| 127 | կտոր/տուփ | Փոքր ստերիլ վիրակապեր, սլինգեր, միզային կաթետր[illegible] | $180,00 | 2 |
| 128 | կտոր/տուփ | Ստերիլ ձեռնոցներ, MESH ցանցեր | $550,00 | 4 |
| 129 | կտոր/տուփ | Ստերիլ խալաթներ | $250,00 | 2 |
| 130 | կտոր/տուփ | Արյան վերցման հավաքածուներ, էլեկտրական մոնիտորներ | $120,00 | 4 |
| 131 | կտոր/տուփ | ԷՍԳ սարք, երկարացման լար | $360,00 | 11 |
| 140 | կտոր/տուփ | Թթվածնային դիմակներ | $50,00 | 2 |
| 142 | կտոր/տուփ | Լիգաշուր | $760,00 | 5 |
| 143 | կտոր/տուփ | Լիգաշուր սարքի ձեռքի գործիքներ | $850,00 | 9 |
| 144 | կտոր/տուփ | Նորածնային MA 730, Ամբու պայուսակներ | $210,00 | 6 |
| 145 | կտոր/տուփ | Արտածծման շարժական սարք | $110,00 | 16 |
| 150 | կտոր/տուփ | Լապարոսկոպիկ տեսախցիկ /3 չիպ/, Լիգաշուր | $700,00 | 12 |
| 151 | կտոր/տուփ | Լապարոսկոպիկ ինսուֆլյատոր | $450,00 | 2 |
| 152 | կտոր/տուփ | Լապարոսկոպիկ տեսամագնիտոֆոն, մալուխ,Լիգաշուր | $120,00 | 9 |
| 153 | կտոր/տուփ | Լապարոսկոպիկ ձեռքի գործիքներ | $1 600,00 | 11 |
| 154 | կտոր/տուփ | Լապարոսկոպիկ ձեռքի գործիքներ, հեմոկլիպս | $1 700,00 | 12 |
| 155 | կտոր/տուփ | Լապարոսկոպիկ ձեռքի գործիքներ, վարագույրներ | $280,00 | 4 |
| 156 | կտոր/տուփ | Գազաթային հոսքի չափիչ, խալաթներ | $60,00 | 3 |
| 157 | կտոր/տուփ | Ստերիլ խալաթներ, սրբիչներ | $120,00 | 4 |
| 159 | կտոր/տուփ | Լիգաշուր սարքի ձեռքի գործիքներ | $1 800,00 | 11 |
| 160 | կտոր/տուփ | Լապարոսկոպիկ տեսախցիկ | $700,00 | 5 |
| 161 | կտոր/տուփ | Լիգաշուր լապարոսկոպիկ գործիքներ | $1 850,00 | 13 |
| 164 | կտոր/տուփ | Երկար հայելիներ,ասեղներ | $340,00 | 1 |
| 165 | կտոր/տուփ | Կոլոստոմիայի պարկեր և աբդոմինալ վիրակապեր | $280,00 | 3 |

14/6.8

| | | | | |
|---|---|---|---|---|
| 166 | կտոր/տուփ | Լայնիչներ, բիյիար ստենտեր | $760,00 | 3 |
| 171 | կտոր/տուփ | Տարբեր ստենտեր | $220,00 | 3 |
| 174 | կտոր/տուփ | Ուռոլոգիական գործիքներ | $280,00 | 6 |
| 175 | կտոր/տուփ | Ոչ ադհերենտ բարձիկներ | $80,00 | 2 |
| 177 | կտոր/տուփ | Ամբու պայուսակներ, Լիգաշուր | $310,00 | 5 |
| 187 | կտոր/տուփ | Ստերիլ ձեռնոցներ, խալաթներ, սրբիչներ | $200,00 | 7 |
| 192 | կտոր/տուփ | Արյան զարկերակային ճնշման չափիչի տնակապեր | $180,00 | 3 |
| 197 | կտոր/տուփ | Անոթային պականներ | $320,00 | 4 |
| 198 | կտոր/տուփ | Էնդոտրախեալ խողովակներ | $500,00 | 2 |
| 199 | կտոր/տուփ | Բիոպսիայի ասեղներ, տեսախցիկի ծածկեր,ձեռնոցներ | $280,00 | 2 |
| 200 | կտոր/տուփ | Ստերիլ ծածկեր, վիտրէկտոմիայի տոպրակներ | $180,00 | 2 |
| 201 | կտոր/տուփ | Չափման անոթային բալոններ, վիտրէկտոմիայի տոպրակներ | $350,00 | 7 |
| 202 | կտոր/տուփ | Հեղուկ տաքացնող սարքեր, մանկական շշեր | $150,00 | 5 |
| 210 | կտոր/տուփ | Լապարոսկոպիկ էկրան | $420,00 | 6 |
| 211 | կտոր/տուփ | Լապարոսկոպիկ էկրան | $420,00 | 6 |
| 212 | կտոր/տուփ | Լապարոսկոպիկ էկրան | $420,00 | 6 |
| 216 | կտոր/տուփ | Ինտրակաթս | $120,00 | 4 |
| 228 | կտոր/տուփ | Լիգաշուր սարքի ձեռքի գործիքներ | $680,00 | 5 |
| 248 | կտոր/տուփ | Ստերիլ պարագաներ, ձեռնոցներ | $100,00 | 2 |
| 249 | կտոր/տուփ | Ստոմաներ տեղեդրելու համաքածուներ | $200,00 | 4 |
| 272 | կտոր/տուփ | Ավտոկլավ | $2 000,00 | 55 |
| 273 | կտոր/տուփ | Ավտոկլավ | $2 000,00 | 55 |
| 278 | կտոր/տուփ | Թաքացուցիչ և օպերացիոն սրահի յու[illegible] | $2 200,00 | 115 |
| 279 | կտոր/տուփ | Թաքացուցիչ | $1 800,00 | 70 |
| 282 | կտոր/տուփ | Օպերացիոն սրահի լամպ | $4 800,00 | 45 |
| 283 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 284 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 285 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 286 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 287 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 288 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 289 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 290 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 291 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 292 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 293 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 294 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 295 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 296 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 297 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 298 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |

14/6.8

| | | | | |
|---|---|---|---|---|
| 299 | կտոր/տուփ | Դոշակ | $280,00 | 60 |
| 300 | կտոր/տուփ | Էլեկտրոնային հիվանդանոցային մահճակալ | $600,00 | 220 |
| 301 | կտոր/տուփ | Էլեկտրոնային հիվանդանոցային մահճակալ | $600,00 | 220 |
| 302 | կտոր/տուփ | Էլեկտրոնային հիվանդանոցային մահճակալ | $600,00 | 220 |
| 303 | կտոր/տուփ | Էլեկտրոնային հիվանդանոցային մահճակալ | $600,00 | 220 |
| 304 | կտոր/տուփ | Էլեկտրոնային հիվանդանոցային մահճակալ | $600,00 | 220 |
| 305 | կտոր/տուփ | Էլեկտրոնային հիվանդանոցային մահճակալ | $600,00 | 220 |
| 306 | կտոր/տուփ | Էլեկտրոնային հիվանդանոցային մահճակալ | $600,00 | 220 |
| 307 | կտոր/տուփ | Էլեկտրոնային հիվանդանոցային մահճակալ | $600,00 | 220 |
| 345 | կտոր/տուփ | Գիշերային ստենդ /կայան/ | $80,00 | 25 |
| 346 | կտոր/տուփ | Գիշերային ստենդ /կայան/ | $80,00 | 25 |
| 347 | կտոր/տուփ | Գիշերային ստենդ /կայան/ | $80,00 | 25 |
| 348 | կտոր/տուփ | Գիշերային ստենդ /կայան/ | $80,00 | 25 |
| 349 | կտոր/տուփ | Գիշերային ստենդ /կայան/ | $80,00 | 25 |
| 350 | կտոր/տուփ | Գիշերային ստենդ /կայան/ | $80,00 | 25 |
| 351 | կտոր/տուփ | Սրտային և միզային կաթետրներ | $600,00 | 1 |
| 352 | կտոր/տուփ | Ապակյա հյուսվածքային ժապավեններ /յարեր/, վիրաբուժական ժապավեններ | $150,00 | 2 |
| 353 | կտոր/տուփ | Ապակյա հյուսվածքային ժապավեններ /յարեր/, վիրաբուժական ժապավեններ | $150,00 | 2 |
| 354 | կտոր/տուփ | Ն/Ե համակարգեր արյան փոխներարկման համար | $80,00 | 5 |
| 355 | կտոր/տուփ | Լիգաշուր սարքի ձեռքի գործիքներ, կարիչներ | $600,00 | 8 |
| 357 | կտոր/տուփ | Ապակյա հյուսվածքային ժապավեններ /յարեր/, կաթետրներ | $130,00 | 4 |
| 364 | կտոր/տուփ | Դատասկոպի հենարան /ձող/ զամբյուղով | $10,00 | 5 |
| 366 | կտոր/տուփ | Դատասկոպի հենարան /ձող/ | $10,00 | 5 |
| 377 | կտոր/տուփ | Տարբեր կաթետրներ | $240,00 | 3 |
| 379 | կտոր/տուփ | TOREY բալոնային կաթետր | $220,00 | 3 |
| 380 | կտոր/տուփ | Ֆունկցիոնալ մահճակալի մաս | $100,00 | 37 |
| 384 | կտոր/տուփ | Ուռոլոգիական կաթետրներ, ստենտեր, բիոպսիայի ակցաններ | $590,00 | 4 |
| 390 | կտոր/տուփ | Ն/Ե համակարգեր + քարթրիջներ | $130,00 | 2 |
| 395 | կտոր/տուփ | Փոքր հիվանդանոցային սառնարան | $40,00 | 30 |
| 399 | կտոր/տուփ | Էլեկտրական սայլակ | $430,00 | 65 |
| 400 | կտոր/տուփ | Էլեկտրական սայլակ | $430,00 | 65 |
| 401 | կտոր/տուփ | Անեստեզիոլոգի բարձր աթոռ | $160,00 | 22 |
| 405 | կտոր/տուփ | Լապարոսկոպի ստենդ | $200,00 | 3 |
| 407 | կտոր/տուփ | Ն/Ե համակարգի ձող | $60,00 | 4 |
| 409 | կտոր/տուփ | Էլեկտրական սայլակ | $320,00 | 65 |
| 429 | կտոր/տուփ | TRISTAR լամպի ձող | $10,00 | 8 |
| 431 | կտոր/տուփ | Արյան ճնշման չափիչ | $20,00 | 7 |
| 437 | կտոր/տուփ | ԷՍԳ տակդիր, սկուտեղ | $10,00 | 6 |
| 438 | կտոր/տուփ | Նորածնային կշեռք | $50,00 | 4 |
| 439 | կտոր/տուփ | Լապարոսկոպիկ գծային դանակ ETHICON | $150,00 | 2 |
| 430-A | կտոր/տուփ | Վիրահատական սեղանի բռնակներ | $350,00 | 27 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 431-A | կտոր/տուփ | Դատարկ շարժական թթվածնային բալոն | $60,00 | 15 |
| 437•A | կտոր/տուփ | Վիրահատական սեղանի ծածկ | $40,00 | 11 |
| 438-A | կտոր/տուփ | Վիրահատական սեղանի ծածկ | $40,00 | 11 |
| 439-A | կտոր/տուփ | Վիրահատական սեղանի ծածկ | $40,00 | 11 |
| 440 | կտոր/տուփ | Հենակներ | $30,00 | 5 |
| 443 | կտոր/տուփ | Նորածնային կշեռք | $50,00 | 4 |
| 444 | կտոր/տուփ | Անիվներով պատգարակ հիվանդների տեղափոխման համար | $100,00 | 15 |
| 446 | կտոր/տուփ | Վիրահատական սեղանի պարագաներ | $120,00 | 29 |
| 447 | կտոր/տուփ | Մանկական հասակաչափ | $20,00 | 2 |
| 448 | կտոր/տուփ | Վիրահատական սեղանի գինեկոլոգիական ոտքեր /4 հատ/ | $240,00 | 19 |
| 452 | կտոր/տուփ | Վիրահատական սեղանի ձող ն/ե ներարկումների համար | $30,00 | 2 |
| 453 | կտոր/տուփ | Վիրահատական սեղանի վարագույր | $80,00 | 18 |
*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 5-ի N 3/3.8-1/14358-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N ՎՄ/3-4/11925-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանցի համայնքի գազաֆիկացման աշխատանքների նախագծում» ծրագրի մասին» N Մ-744-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Է.Կ.Պ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01543457) 2012 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված՝ N 48 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ 110000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ - 917 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N Մ-746-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 6-ի N 3/3.8-1/14359-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N ՎՄ/3-4/11926-12 եզրակացությունները,* ***ո ր ո - շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լորդ Բայրոնի անվան թիվ 20 դպրոց ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի նախագծում» ծրագրի մասին» N Մ-746-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2012 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված՝ N 69 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ 130000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**9 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 918 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 7-ի N 3/3.8-1/14506-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N ՎՄ/3-4/11921-12 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. Էյ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա և 2012 թվականի մայիսի 18-ի N Մ-379-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2012 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտի անցկացում՝ 3000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**15 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 919 – Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի նոյեմբերի 9-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐ-ԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 6-ի N 3/3.8-1/14423-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N ԴԴ/22/11124-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N ՎՄ/3-4/11923-12 եզրակացու-թյունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «ազգաբնակչության պահպանմանը և բժշկասոցիալական ծրագրերի զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) ծրագրի 9-րդ կետի 1-ին պարբերությունը կարդալ հետևյալ խմբագրությամբ. Մտավոր, ֆիզիկական լսողական կամ զարգացման այլ խնդիրներ ունեցող երեխաների անվճար վերականգնողական բուժօգնության կազմակերպում Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում – 742 մլն դրամ:

Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ամբուլատոր վերականգնողական ծառայությունների բարելավման նպատակով, Երևանի թիվ 9 մանկական

պոլիկլինիկայի վերականգնողական ծառայության սենյակների կահավորում – 1 մլն դրամ, նոյեմբեր-դեկտեմբեր 2012 թ.

2) ծրագրի 9-րդ կետի 6-րդ պարբերությունը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«Արաբկիր» ԲՀ-ԵԴՄԻ հիվանդանոցային ֆիզիոտերապիայի, վերականգնողական բուժական ֆիզկուլտուրայի բաժանմունքի վերակառուցում – 35 մլն դրամ:

«Արաբկիր» ԲՀ-ԵԴՄԻ կառուցվող նոր մանկաբուժական մասնաշենքի դռների և պատուհանների, հիվանդանոցային կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ, օդափոխման համակարգի ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ – 50 մլն դրամ, 2012 - 2013 թթ.:

3) ծրագրի 10-րդ կետի 2-րդ պարբերությունը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

Շինարարական և վերանորոգման աշխատանքներ - 1 մլրդ 900 մլն դրամ:

«Արաբկիր» ԲՀ-ԵԴՄԻ կառուցվող նոր մանկաբուժական մասնաշենքի դռների և պատուհանների, հիվանդանոցային կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ, օդափոխման համակարգի ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ – 50 մլն դրամ:

Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ամբուլատոր վերականգնողական ծառայությունների բարելավման նպատակով, Երևանի թիվ 9 մանկական պոլիկլինիկայի վերականգնողական ծառայության սենյակների կահավորում – 1 մլն դրամ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 920-Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1125-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության 2012 թվականի հոկտեմբերի 16-ի N H-7/12 և հոկտեմբերի 29-ի N H-12/12 գրությունները ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 24-ի N 3/3.8-1/13791-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 6-ի N A9FF-C3FA-1C6B եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-1125-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի N Մ-591-Ա որոշման խմբագրությամբ) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է).

2) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում «1500000 դրամ» բառերը փոխարինել «1400000 դրամ» բառերով, «300000 դրամ» բառերը՝ «280000 դրամ» բառերով և «1800000 դրամ» բառերը «1680000 դրամ» բառերով.

3) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 15-րդ ենթակետում «4000000 դրամ» բառերը փոխարինել «1750000 դրամ» բառերով, «800000 դրամ» բառերը՝ «350000 դրամ» բառերով և «4800000 դրամ» բառերը՝ «2100000 դրամ» բառերով.

4) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետը լրացնել նոր՝ 16-րդ ենթակետով. հետևյալ բովանդակությամբ՝

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16. | 04.10.12. | պայմանագիր N 596700 | «Արմենիա» հյուրանոցային համալիր» ՓԲԸ | միջնորդման կազմակերպում | 3125000 | 625000 | 3750000 |
| | | ընդամենը | | | 50666408 | 9440282 | 60106690 |

5) որոշմամբ հաստատված ծրագրի 11-րդ կետի 5-րդ ենթակետում «1500000 դրամ» բառերը փոխարինել «1400000 դրամ» բառերով, 9-րդ ենթակետում «577650 դրամ» բառերը՝ «52650 դրամ» բառերով, 10-րդ ենթակետում «2250000 դրամ» բառերը՝ «2000000 դրամ» բառերով, 12-րդ ենթակետում «4000000 դրամ» բառերը՝ «1750000 դրամ» բառերով.

6) որոշմամբ հաստատված ծրագրի 11-րդ կետը լրացնել նոր՝ 13-րդ ենթակետով. հետևյալ բովանդակությամբ՝

13. «Արմենիա» հյուրանոցային համալիր ՓԲԸ - միջնորդում դրամական միջոցների հայթայթման նպատակով «3125000 դրամ»:

2. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀՎՀ 02552842) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «Արմենիա» հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504956) 2012 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված N 596700 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջնորդման կազմակերպում՝ 3125000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

Հաստատում եմ
“Օրրան” բարեգործական հասարակական կազմակերպության
տնօրեն Արմենուհի Հովհաննիսյան

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՕՐՐԱՆ» օգնություն կարիքավոր ընտանիքներին

2012թ.

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակները | Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին և ծերերին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին, միայնակ ու կարիքավոր ծերերին |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը |
| 3 | Բարեգործը (բարեգործները) | ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ /Անգլիա/, Ջերարդ Գաֆեսճյան հիմնադրամ /ԱՄՆ/, VivaCell-MTS,Հակոբ Քարսեղյան |
| 4 | Ծրագրի կատարողը | «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն<br>ՀՎՀՀ 02552842<br>Առաջին Եկմալյան 6<br>Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>Հեռ.` 53-51-67 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Երևան<br>Սոցիալական բնագավառ |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 84515000 (ութսունչորս միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագիրը սկսել է գործել 2000թ. ապրիլի 19-ից, 16 երեխաներով և 27 ծերերով:<br>Այժմ ծրագրում ներգրավված են.<br>• 6-16 տարեկան 100 երեխա, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունեն: |



| | | |
|---|---|---|
| | | • 51 թոշակառուներ` 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, ովքեր անտուն են և մուրում են փողոցում, միայնակ են, ամուսնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն:<br>Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը` նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժիշկը եւ գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է “ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն”, Երևանի տարբեր վարչական շրջաններ սոցիալական բաժինների, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ «ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի » հետ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսվել է 2000թ. ապրիլին և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2012թ. հունվարի 1-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ: |
| 9 | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Օրրան ԲՀԿ-ն Առաջին Եկմալյան 6 հասցեում գտնվող իր եռահարկ կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ եւ ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 100 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ եւ իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական եւ բժշկական ծառայություն:<br>Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է մատուցում 51 միայնակ, կարիքավոր ծերերի եւ հաշմանդամների:<br>• 100 երեխայի և 51 թոշակառուի ամենօրյա սնունդ- տարեկան կազմում է 32952918 դրամ<br>• բժշկական և հոգեբանական ծառայություններ - տարեկան 2045441 դրամ<br>• սոցիալական ծառայություն, հագուստ և կոշիկ - տարեկան 4490877 դրամ<br>• մշակութային միջոցառումներ - տարեկան 5951873 դրամ<br>• դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո շաբաթական 6 օր 100 երեխայի համար, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, և ծեռարվեստական երեք կենտրոններում ուսուցում (Փայտամշակում, մակրամե, կավագործություն)- տարեկան 13804383 դրամ |

- արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկված հագուստ, գրենական պիտույքներ, խաղալիք)– տարեկան 3465000 դրամ
- նվիրատվություն.
  - ծայրաստիճան կարիքավոր 60 ընտանիքների էլեկտրաէներգիայի և 3 ընտանիքների բնակարանի վարձի վճարում- տարեկան 1724800դրամ,
  - 65 երեխաների ամենօրյա երթևեկության ծախսեր- տարեկան 4056000 դրամ,
  - 8 սաների՝ ըստ նախասիրության (երաժշտություն, արհեստներ,շախմատ և այլ) ուսման վարձերի վճարում - տարեկան 231000 դրամ;

Ընդամենը 68722292 դրամ (վաթսունութ միլիոն յոթ հարյուր քսաներկու հազար երեք հարյուր իննսուներկու դրամ )

| | | N | Ամսաթիվ | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպության կամ մատակարարի անվանումը | Նկարագրությունը | ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ | ԱԱՀ-ի չափը տարեկան | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | 1 | 14.08.08 | N-263135 | " Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ | էլեկտրաէներգիայի մատակարարում | 1400000 | 280000 | 1680000 |
| | | 2 | 17.06.04 | N010309530 51/3162/4682 | «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ | Հեռախոս. կապի մատակարարում | 1300000 | 260000 | 1560000 |
| | | 3 | 12.07.06 | N 07-0012-6-1 | Երևանի «Ջրմուղ Կոյուղի» | Խմելու ջրի մատակարարում | 150000 | 30000 | 180000 |
| | | 4 | 14.12.10 | 4-263 | «Կենտրոն Մաքրություն» ՓԲԸ | Կենցաղային աղբի հեռացման աշխատանքներ | 180000 | 36000 | 216000 |
| | | 5 | 10.04.06 | Պայմանագիր Ա 012.04.06.1231 | «ՀայՌուսգազար» ՓԲԸ | Գազի մատակարարում | 3000000 | 600000 | 3600000 |
| | | 6 | | | | Արտասահմանից բեռների ներմուծում | 3465000 | | 3465000 |
| | | 7 | | | "Էյ-Ի-Ջի-Սերվիս" ՍՊԸ | Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում | 171258 | 34252 | 205510 |



| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 8 | 23.07.12 | AT-AU-059-12 | "Գրանտ Թորնթոն Ամիօ" ՍՊԸ | Աուդիտ | 2000000 | 400000 | 2400000 |
| | | 9 | 23.12.08 | Մատակարարման պայմանագիր առ 23.12.08, հավելված 3 առ 01.12.11 | "Սթար Դիվայդ" ՓԲԸ | Մթերք | 28691350 | 5738270 | 34429620 |
| | | 10 | 12.12.11 | 10 | "Վալենսիա" ՀՁ ՍՊԸ | Երեխաների այցելություն Ջրաշխարհ ( 80 եր*6000դր) | 480000 | 96000 | 576000 |
| | | 11 | | | "Ռիպա" առողջարան ՍՊԸ | Երեխաների հանգիստ "Ռիպա" առողջարանում (60եր*7 օր*6000 դր) | 2520000 | 504000 | 3024000 |
| | | 12 | 05.12.11 | 2996 | Տեխնիկական անվտանգություն ազգային կենտրոն | Գազի կաթսային տեխնիկական զննում | 33800 | 6760 | 40560 |
| | | 13 | 16.12.10 | 74556 | "Դ-Տելեկոմ" ՓԲԸ | Հեռախոս. կապի մատակարարում | 1200000 | 240000 | 1440000 |
| | | 14 | 12.12.11 | 16 | "Դարոյնք" ՍՊԸ | Թխվածքաբլիթ, վաֆլի | 1200000 | 240000 | 1440000 |
| | | 15 | 05.12.11 | 135/11 | "Ֆլեշ"ՍՊԸ | Բենզինի գնում | 1750000 | 350000 | 2100000 |
| | | 16 | 04.10.12 | Պայմանագիր N 596700 | Արմենիա Հյուրանոցային Համալիր ՓԲԸ | Միջոցառման կազմակերպում | 3125000 | 625000 | 3750000 |
| | | | | Ընդամենը | | | 50666408 | 9440282 | 60106690 |

Ներմուծումներ՝ բարերարների կողմից ուղարկվող նվերներ, հիմնականում մանկական հագուստ եւ դպրոցական պիտույքներ:

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր «ՀայՌուսգազարդ»-ի, «ԱրմենՏել»-ի, "Դ-Տելեկոմ" ՓԲԸ ,«Հայաստանի էլեկտրական Ցանցեր», Երևանի «Ջրմուղ Կոյուղի» ընկերությունների հետ: |

| | | |
|---|---|---|
| | | • գազ-տարեկան՝ 3000000 դրամ<br>• գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում- 01.01.12-31.03.12, 01.11.12-31.12.12-171258 դրամ<br>• տեխնիկական անվտանգություն -33800 դրամ<br>• ջուր՝ 150000 դրամ<br>• էլեկտրաէներգիա՝ 1400000 դրամ<br>• հեռախոս՝ 2500000 դրամ<br>• կենցաղային աղբի հեռացման աշխատանքներ՝ 180000դրամ<br>• գույքահարկ շենքի և մեքենայի համար 1160000 դրամ<br>• գրասենյակային ծախսեր 52650 դրամ<br>• ֆինանսական աուդիտ «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՍՊԸ-ի կողմից 2000000 դրամ<br>• փոստային ծախսեր 120000 դրամ<br>• բենզինի ծախսեր-1750000 դրամ<br>• անվադողերի ձեռքբերում – 150000 դրամ<br><br>• «Արմենիա» հյուրանոցային համալիր» ՓԲԸ միջոցառում դրամական միջոցների հայթայթման նպատակով-3125000 դրամ<br><br>Ընդամենը 15792708( տասնհինգ միլիոն յոթ հարյուր իննսուներկու հազար յոթ հարյուր ութ դրամ) |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | 1.ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>2.ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>3.ՀՀ առողջապահության նախարարություն<br>4.ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>5.Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների սոցիալական վարչություններ<br>6.Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ<br>7. ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժին<br><br>«Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների հետ: |



| | | |
|---|---|---|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով<br>• ամսեկան եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին<br>• գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով<br>• եռամսյակային հաշվետվություններ ՀՀ կառավարությանն առընթեր Պետական Եկամուտների Կոմիտե<br>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՍՊԸ-ի կողմից |

*Ծրագրի ղեկավար* *Արմենուհի Հովաննիսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 921-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-855-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության 2012 թվականի հոկտեմբերի 29-ի և 31-ի NN AC-222-12, AC-237-12 գրությունները ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 5-ի N 3/3.8-1/14349-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 6-ի N ՎՄ/3-4/11775-12, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալ-մանկավարժական աջակցություն երեխաներին» ծրագրի մասին» N Մ-855-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է).

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նորոգշին» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06000261) 2012 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված՝ N 056/BMZ/10/07/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Տաշիրի և Գյումրիի սոցիալական կենտրոնների ավտոնոմ ջեռուցման համակարգերի վերանորոգում՝ 6113189 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
գործադիր տնօրեն Անահիտ Մխոյանի կողմից
«04» նոյեմբերի 2009թ.

Հայկական Կարիտասի «Սոցիալ-մանկավարժական աջակցություն երեխաներին»

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալ-մանկավարժական աջակցության ապահովում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանական Կարիտասի և Գերմանական Կառավարության միջոցներով:<br>Հասցե՝ Գերմանական Կարիտաս, Ֆրայբուրգ, 79104 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարիտաս Բարեսիրական Հասարակական Կազմակերպություն<br>Հասցե՝ ք. Գյումրի, Հ. Սարգսյան փ, 3-րդ նրբանցք, տուն 8<br>ՀՎՀՀ 05514397 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի Մարզ, Գյումրի, Մ.Խորենացի, նրբ. 1, տուն 3<br>Բնագավառը՝ սոցիալ-կրթական<br>Հայկական Կարիտասի Սոցիալական կենտրոնների մասնաշենքերը Հայ Կաթողիկե Եկեղեցու սեփականությունն են, որոնք ծրագրի ավարտից հետո ևս ծառայելու են որպես սոցիալական կենտրոններ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 321.750.000 ՀՀ դրամ (585 000 Եվրո): |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայկական Կարիտասի Սոցիալական կենտրոններ հաճախող Գյումրիում 70 (2009թ. հոկտեմբերից՝ 40 և 2010թ. հունվարից՝ 70 երեխա) եւ Տաշիրում 30 (2011թ. հունվարից) սոցիալապես անապահով երեխաներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Սկիզբը՝ 01.08.09<br>Ավարտը՝ 31.12.12 |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի հիմնական նպատակն է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին սոցիալ-մանկավարժական աջակցություն ապահովելն է:<br><br>Ծրագրի շրջանակներում բացվելու է երկու սոցիալական կենտրոններ Գյումրի ու Տաշիր քաղաքներում, ուր հաճախելու են ընդհանուր առմամբ 100 երեխա (70 երեխա Գյումրիում եւ 30 երեխա Տաշիրում): Գյումրիում կենտրոնը կգործի 2009 – 2012 թթ., իսկ Տաշիրում՝ 2011-2012 թթ.: Ծրագրի ընթացքում կվերանորոգվեն Գյումրիի և Տաշիրի կենտրոնների սպորտային խաղահրապարակները: Ծրագրի շրջանակներում կգնվեն ճամբարային պարագաներ կենտրոնների սաների համար:<br><br>Սոցիալական կենտրոններում սոցիալապես անապահով եւ դժվարին պայմաններում հայտնված երեխաների հետ աշխատելու են արհեստավարժ մասնագետներ՝ հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, իրավաբաններ, տարբեր մասնագիտությամբ ուսուցիչներ, ովքեր կնպաստեն նրանց ընդհանուր զարգացմանը, ընտանիքների հետ փոխհարաբերությունների կարգավորմանը եւ կրթությանը:<br><br>Միջոցառումներ կան ուղղված երեխաների եւ նրանց ծնողների արհեստագործական ուսուցմանը (համակարգչային գործ, կար, վարսավիրություն, եւն.):<br><br>Կենտրոնը կգործի շաբաթը հինգ օր: Երեխաները հնարավորություն կունենան օրը մեկ անգամ սնվելու եւ իրենց հիգիենիկ վիճակը բարելավելու կենտրոնում:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքն է 321.750.000ՀՀ դրամ, որից 269.599.550 ծրագրին վերաբերվող ծախսերն են, իսկ մնացած 52.150.450ՀՀ դրամը կազմակերպական ծախսեր: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Կենտրոնների վերանորոգում - 9405000ՀՀ Դրամ<br><br>1.1. Գյումրիի սոցիալական կենտրոնի տարածքի եւ ջրամատակարարման համակարգի վերանորոգման աշխատանքների իրականացում 03.09.09 – 20.11.09 «Ապրենք և կառուցենք» ՍՊԸ կողմից: - 4.862.310 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br>1.2. Գյումրիի կենտրոնի ընթացիկ վերանորոգումներ 2010 – 2012թթ. – 1.980.000ՀՀ դրամ:<br>1.3. Տաշիրի կենտրոնի վերանորոգում 2011թ. – 2012թթ. - 1.925.000ՀՀ դրամ:<br>1.4. Նյութերի գնում և վերահսկողի վարձատրություն՝ 637.690ՀՀ դրամ<br>Երկու կենտրոնների վերանորոգման աշխատանքների արժեքը կազմում է 9.405.000 ՀՀ դրամ |



| | | |
|---|---|---|
| | | 2. Կահույքի և սարքավորումների գնում – 10.375.000 ՀՀ դրամ:<br>3. Սոցիալական կենտրոնին սպասարկող մեքենայի գնում NIVA Chevrolet: - 7.150.000 ՀՀ դրամ: /Ծրագրի ավարտից հետո մեքենան կծառայի կազմակերպության նմանատիպ բարեգործական ծրագրերի համար/<br>4. Սննդի գնում շահառուների համար – 19.988.650ՀՀ դրամ:<br>5. Գրենական պիտույքների գնում շահառուների համար – 6.050.000 ՀՀ դրամ:<br>6. Ուսուցողական նյութեր և սարքավորումներ – 10.600.000 ՀՀ դրամ:<br>7. Տեսանյութերի պատրաստում և հեռարձակում – 1.760.000 ՀՀ դրամ:<br>8. Խոհանոցային պարագաների գնում – 852.500 ՀՀ դրամ:<br>9. Սոցիալական կենտրոնների կոմունալ ծախսեր – 9.075.000 ՀՀ դրամ:<br>10. Մեքենայի շահագործման և բենզինի ծախս – 8.207.311 ՀՀ դրամ:<br>11. Դեղորայք և հիգիենիկ պարագաների գնում - 2.211.000 ՀՀ դրամ:<br>12. Տեղեկատվական թերթիկների տպագրում - 330.000 ՀՀ դրամ:<br>13. Հագուստի գնում շահառուներին բաշխելու համար – 14.655.850 ՀՀ դրամ:<br>14. Սպորտային գույքի գնում կենտրոնների համար – 1.729.750 ՀՀ դրամ:<br>15. Երեխաների հետ աշխատող մասնագետների, փորձագետների, ուսուցիչների վարձատրություն – 152.782.300 ՀՀ դրամ:<br>16. Տաշիրի և Գյումրու կենտրոնների սպորտային խաղահրապարակների վերանորոգում – 6.113.189 ՀՀ դրամ<br>17. Ճամբարային պարագաների գնում – 8.314.000 ՀՀ դրամ<br><br>Ընդամենը՝ 269.599.550 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը կազմում են 52.150.450 ՀՀ դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն<br>Կրթության եւ գիտության նախարարություն<br>Շիրակի Մարզպետարան<br>Գյումրու քաղաքապետարան<br>Տաշիրի քաղաքապետարան<br>Հայ Կաթողիկե Առաջնորդարան<br>Տաշիրի Տիրամայր Հայաստանի Կուսաստան |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկումը կրելու է պարբերական բնույթ և կատարվելու է Գերմանական Կարիտասի կազմակերպության եւ «Հայկական Կարիտաս»-ի վարչական խորհրդի կողմից:<br>Վերահսկումը կատարվելու է այցերի, զեկուցագրերի, եւ վերստուգիչ միջոցառումների միջոցով:<br>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ հաշվետվություններ ներկայացնելու միջոցով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ-922-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N Մ-712-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 5-ի N 3/3.8-2/14334-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 6-ի N ՎՄ/3-4/11766-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 31-ի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի և Նորվեգիայի Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետի, մանրէների էկոլոգիայի բնագավառում համագործակցություն» ծրագրի մասին» N Մ-712-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Իքս-Արթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01237555) 2012 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված՝ N 18/10/12-1 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տեխնիկայի և բաղադրամասերի ձեռքբերում՝ 1903200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 923 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N ԱՔ/15-1/10791-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 5-ի N 3/3.8-1/14348-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 5-ի N ՎՄ/3-4/11761-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հետ (ՀՎՀՀ՝ 02508003) 2012 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԲԸԱՀԾՁԲ-12/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական սարքավորումների, դեղերի և բժշկական նշանակության այլ ապրանքների մաքսազերծման, բեռնափոխադրման կազմակերպման, բեռների տրանսպորտային մշակման և պահման ծառայությունների մատուցում՝ 990000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ար.14/5.Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ-924-Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 5-ի N 3/3.8-2/14327-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 7-ի N ԴԴ/22/11072-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 5-ի N ՎՄ/3-6/11760-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք և բուժպարագաներ՝ 4 տեղ, 375 կգ ընդհանուր քաշով, 7549.68 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1944.2 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

[redacted]

| Նo | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Էպինեֆրին (ադրենալին), 1մգ/մլ, 1մլ ամպուլա | 30 | 11.19 |
| 2 | Կենսաբանական անվտանգության խցիկ, II կարգ | 1 | 6348.04 |
| 3 | Փաթեթավորում անվտանգության և տեղափոխման համար | 1 | 629.64 |
| 4 | Տուբերկուլին, 5UI/0.1 մլ, բազմաչափաբաժին, 1 չափաբաժին | 540 | 514.62 |
| 5 | Իզոթերմալ արկղ | 1 | 35.00 |
| 6 | Էպինեֆրին (ադրենալին), 1մգ/մլ, 1մլ ամպուլա | 30 | 11.19 |
| | Ընդամենը | | 7549.68 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**09 նոյեմբերի 2012 թվականի N Մ-925-Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲՀԿ-Ի «ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 5-ի N 3/3.8-1/14335-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 2-ի N 02/ 6847-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 5-ի N ԴԴ/22/10947-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 6-ի N ՎՄ/3-4/11767 -12, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 2-ի N 01/5261-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397) կողմից իրականացվող՝ 3187100 դրամ ընդհանուր արժեքով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության «Առողջության առաջնային պահպանման կենտրոնի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նորոգշին» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06000261) 2012 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 110/RPHC/12/07/01 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության «Առողջության առաջնային պահպանման կենտրոնի վերանորոգում՝ 3187100 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն՝ Անահիտ Մխոյանի կողմից
« 29»հոկտեմբերի 2012թ.

Հայկական Կարիտաս ԲՀԿ-ի Առողջության Առաջնային Պահպանման Կենտրոնի Վերանորոգում

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Իրականացնել «Հայկական կարիտաս» ԲՀԿ-ի Առողջության Առաջնային Պահպանման Կենտրոնի վերանորոգում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն |
| 3 | Բարեգործը | Հայաստանում Գերմանիայի Դաշնության դեսպանատուն<br>Yerevan, 0025, Charents street 29 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի մարզ, ք.Գյումրի, Առողջության Առաջնային Պահպանման Կենտրոն<br>բնագավառը՝ առողջապահություն |
| 6 | Ծրագրի բյուջեն | 3,187,100 դրամ առանց ԱԱՀ-ի |
| 7 | Բարեգործություն ստացողը | Հայկական Կարիտաս ԲՀԿ-ի Առողջության Առաջնային Պահպանման Կենտրոնի 2500 շահառու |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2 ամիս, նոյեմբերի 1, 2012թ.- դեկտեմբերի 20, 2012թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է ջրագծի մոնտաժում, բակի բարեկարգում, ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ: Ծրագիրը նախատեսված է իրականացնել 2012թ.նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:<br>Ծրագրի շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 3.187.100 (երեք միլիոն հարյուր ութսունյոթ հազար հարյուր) դրամ, որն էլ խնդրում ենք ազատել ԱԱՀ-ից: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք կբերվեն սինթետիկ խողովակ, ձևավոր մասեր, ավազ, ցեմենտ, արտաքին և ներքին հարդարման նյութեր, կիրականացվի ասֆալտապատում: Կօգտագործվի տարբեր տեսակի շինտեխնիկա, մասնագիտական և բանվորական աշխատանք: Ծառայությունները կմատուցվեն կապալառու Մարալիկի «Նորոգշին» ԲԲԸ-ի կողմից: Պայմանագրի արժեքը կազմում է 3.187.100 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չկան: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի մասին պաշտոնական նամակով կտեղեկացվի Շիրակի մարզպետարանին և Շիրակի մարզի առողջապահության վարչությանը : Անմիջական համագործակցություն կիրականացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի Հայկական Կարիտաս ԲՀԿ Վարչական Խորհուրդը: Մարզպետարանը և Առողջապահության վարչությունը ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները: Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 926 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի հոկտեմբերի 19-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 15-ի N 3/3.8-2/13364-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 11-ի N ՖԲ/ԱնՄ-5/7084-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 17-ի N ՎՄ/3-6/11062-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները (բաշխման ցանկերը կցվում են) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա և 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) շաքարավազ՝ 280 տեղ, 14040 կգ ընդհանուր քաշով, 22480 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 5400 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

2) արևածաղկի յուղ (ձեթ՝ 20808 հատ)՝ 1734 տեղ, 17738.82 կգ ընդհանուր քաշով, 59397.76 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

3) մակարոնային արտադրանք (սպագետտի)՝ 2010 տեղ, 20441.7 կգ ընդհանուր քաշով, 45412 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

4) բրինձ՝ 700 տեղ, 14100 կգ ընդհանուր քաշով, 28360 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 5400 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## Բեռի բաշխման ցանկ

ինվոյս 01996 08.08.2012թ.

| N N | Ապրանքի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Արժեքը ըստ մարզերի (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Շաքարավազ | կգ | 14000 | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 384 |
| | | | | | Այգուտ | 164 | 850 |
| | | | | | Մարտունի | 73 | 379 |
| | | | | | Դպրաբակ | 81 | 420 |
| | | | | | Վահան | 188 | 975 |
| | | | | | Կալավան | 23 | 119 |
| | | | | | Բարեպատ | 6 | 31 |
| | | | | | Ջրավանք | 31 | 161 |
| | | | | | Անտառամեջ | 22 | 114 |
| | | | | | Գավառ | 61 | 316 |
| | | | | | Թթուջուր | 81 | 420 |
| | | | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 264 |
| | | | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 88 |
| | | | | | Արտաշատ | 16 | 83 |
| | | | | | Գետազատ | 39 | 202 |
| | | | | | Մրգանուշ | 16 | 83 |
| | | | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 67 |
| | | | | | Սևաբերդ | 41 | 213 |
| | | | | | Ջրաղբյուր | 18 | 93 |
| | | | | | Աբովյան | 38 | 197 |
| | | | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 249 |
| | | | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 78 |
| | | | | | Իջևան | 18 | 93 |
| | | | | Երևան | 3201 | | 16,597 |
| | Ընդամենը | | | | 4335 | | 22,480 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն* *Հ. Ղազարյան*

# Բեռի բաշխման ցանկ

հնվոյս 02307 15.09.2012թ.

| N N | Ապրանքի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արևածաղկի ձեթ | կգ | 16854.48 | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 1,014 |
| | | | | | Այգուտ | 164 | 2,247 |
| | | | | | Մարտունի | 73 | 1,000 |
| | | | | | Դպրաբակ | 81 | 1,110 |
| | | | | | Վահան | 188 | 2,576 |
| | | | | | Կալավան | 23 | 315 |
| | | | | | Բարեպատ | 6 | 82 |
| | | | | | Ջողավանք | 31 | 425 |
| | | | | | Անտառամեջ | 22 | 301 |
| | | | | | Գավառ | 61 | 836 |
| | | | | | Թթուջուր | 81 | 1,110 |
| | | | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 699 |
| | | | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 233 |
| | | | | | Արտաշատ | 16 | 219 |
| | | | | | Գետազատ | 39 | 534 |
| | | | | | Մրգանուշ | 16 | 219 |
| | | | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 178 |
| | | | | | Սևաբերդ | 41 | 562 |
| | | | | | Ջրառատ | 18 | 247 |
| | | | | | Արզական | 38 | 521 |
| | | | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 658 |
| | | | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 206 |
| | | | | | Իջևան | 18 | 247 |
| | | | | Երևան | 3201 | | 43,860 |
| | Ընդամենը | | | | 4335 | | 59,398 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն՝* *Հ. Ղազարյան*

իՆվոյս 02308 15.09.2012թ.

# *Բեռի բաշխման ցանկ*

| N N | Ապրանքի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Մակարոն | կգ | 20100 | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 775 |
| | | | | | Այգուտ | 164 | 1,718 |
| | | | | | Մարտունի | 73 | 765 |
| | | | | | Դպրաբակ | 81 | 848 |
| | | | | | Վահան | 188 | 1,969 |
| | | | | | Կալավան | 23 | 241 |
| | | | | | Բարեպատ | 6 | 63 |
| | | | | | Ջորավանք | 31 | 325 |
| | | | | | Անտառամեջ | 22 | 230 |
| | | | | | Գավառ | 61 | 639 |
| | | | | | Թթուջուր | 81 | 848 |
| | | | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 534 |
| | | | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 178 |
| | | | | | Արտաշատ | 16 | 168 |
| | | | | | Գետազատ | 39 | 409 |
| | | | | | Մրգանուշ | 16 | 168 |
| | | | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 136 |
| | | | | | Սևաբերդ | 41 | 429 |
| | | | | | Ջրառատ | 18 | 189 |
| | | | | | Աբովյան | 38 | 398 |
| | | | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 503 |
| | | | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 157 |
| | | | | | Իջևան | 18 | 189 |
| | | | | Երևան | 3201 | | 33,530 |
| | Ընդամենը | | | | 4335 | | 45,412 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն՝* *Հ. Ղազարյան*

# Բեռի բաշխման ցանկ

ինվոյս 02309 15.09.2012թ.

| N N | Ապրանքի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բրինձ | կգ | 14000 | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 484 |
| | | | | | Այգուտ | 164 | 1,073 |
| | | | | | Մարտունի | 73 | 478 |
| | | | | | Դպրաբակ | 81 | 530 |
| | | | | | Վահան | 188 | 1,230 |
| | | | | | Կալավան | 23 | 150 |
| | | | | | Բարեպատ | 6 | 39 |
| | | | | | Ջորավանք | 31 | 203 |
| | | | | | Անտառամեջ | 22 | 144 |
| | | | | | Գավառ | 61 | 399 |
| | | | | | Թթուջուր | 81 | 530 |
| | | | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 334 |
| | | | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 111 |
| | | | | | Արտաշատ | 16 | 105 |
| | | | | | Գետազատ | 39 | 255 |
| | | | | | Մրգանուշ | 16 | 105 |
| | | | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 85 |
| | | | | | Սևաբերդ | 41 | 268 |
| | | | | | Ջրառատ | 18 | 118 |
| | | | | | Աբովյան | 38 | 249 |
| | | | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 314 |
| | | | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 98 |
| | | | | | Իջևան | 18 | 118 |
| | | | | Երևան | 3201 | | 20,941 |
| | Ընդամենը | | | | 4335 | | 28,360 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն՝* *Հ. Ղազարյան*